
### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Ներկայացնել հույզը, զգացմունքը և կամքը որպես հուզականային գործընթաց:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզականային ոլորտը և նրա դերը,
- բ. ճիշտ է ներկայացնում հույզերի և զգացմունքների արտաքին դրսևորումները,
- գ. ճիշտ է ներկայացնում կամային ոլորտի դրսևորումները:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեսթի և անհատական աշխատանքի միջոցով` ուսուցման ընթացքում ուսանողը կազմում է նախադպրոցականի հիշողությունը և ուշադրությունը զարգացնող խաղերի հավաքածու` դրանք տեսակավորելով ըստ տեսակների, գործընթացների:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացրել է նշված խաղերի ժողովածուն, և ըստ կատարման չափանիշների` թեսթը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք. կազմակերպվում են իրավիճակային խաղեր: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, զարգացնող խաղերի ժողովածուներ:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 8 ժամ
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Ներկայացնել խառնվածքը և բնավորությունը որպես հոգեկան որակ կամ անձի անհատական առանձնահատկություն

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում խառնվածքի հոգեբանական բնութագիրը և տեսակները,
- բ. ճիշտ է ներկայացնում բնավորությունը, նրա դրսևորումները և գծերը,
- գ. ճիշտ է ներկայացնում խառնվածքի և բնավորության ձևավորումը նախադպրոցականների մոտ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Սովորողին կառաջադրվի իրավիճակային 10 խնդիր, նա կտա դրանց լուծումները՝ ներկայացնելով դրանց իրականացման մեխանիզմները: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե նա տալիս է առնվազն 8 խնդրի լուծում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային խաղեր՝ առավելագույնս մոտեցված իրական վիճակին: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 8 ժամ
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 6.**

Ներկայացնել ընդունակությունները և դիրքորոշումները որպես անձի անհատական առանձնահատկություն:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, նրա տեսակները և կառուցվածքը,
- բ. ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների ձևավորման պայմանները, տեսակները և կառուցվածքը,
- գ. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները և դիրքորոշումները նախադպրոցականների մոտ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեսթի և անհատական աշխատանքի միջոցով. ուսանողը ուսուցման ընթացքում կազմում է խաղերի, միջոցառումների ծրագրերի փաթեթ, որոնց իրականացումը կնպաստի նախադպրոցականի անատականության, նրա ստեղծագործական ունակությունների

զարգացմանը: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացրել է աշխատանքային փաթեթը, թեսթը ճիշտ է լրացվել նվազագույնը 90%-ով, իկս ըստ կատարման չափանիշների՝ հարցերի պատասխանները ճիշտ են տվել:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Իրականացվում են խաղեր, միջոցառումներ, որոնք նպաստում են նախադպրոցականի անհատականության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, զարգացնող խաղերի ժողովածուներ:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

### **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝** ՆԿԴ 04-09-004

### **ՆՊԱՏԱԿԸ**

Դասընթացը յուրացնելուց հետո ուսանողը տիրապետում է ծնված օրվանից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման հիմնական օրինաչափություններին և դաստիարակության առանձնահատկություններին, նախադպրոցական հաստատություններում նախադպրոցականի անձնավորության ձևավորման ու համակողմանի դաստիարակության գործընթացը իրականացնելու համար

### **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 126 ԺԱՄ**

դասախոսություն՝ 58 ժամ

գործնական պարապմունք՝ 68 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա առողջապահության հիմունքներով» և «Նախադպրոցականի հոգեբանություն» մոդուլները:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանալ նախադպրոցական մանկավարժության հիմնահարցերը
2. Իմանալ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության բովանդակությունն ու մեթոդիկան

3. Իմանալ վաղ տարիքի երեխաների զարգացման ու դաստիարակության առանձնահատկությունները
4. Իմանալ խաղային գործունեության առանձնահատկությունները
5. Իմանալ ընտանիք-մանկապարտեզ-դպրոց համագործակցության նշանակությունն ու կազմակերպման ձևերը
6. Իմանալ մանկավարժական գործընթացի կազմակերպման ու ղեկավարման առանձնահատկությունները նախադպրոցական հաստատություններում

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ ուսումնառության արդյունքների.

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ նախադպրոցական մանկավարժության հիմնահարցերը:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. ճիշտ է ներկայացնում ՀՀ կրթական համակարգի կառուցվածքը, և ռազմավարությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում մանկավարժական հասկացությունների համակարգը,
- գ. օգտվում է գիտամանկավարժական հետազոտության մեթոդներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխայի անձնավորության ձևավորման և դաստիարակության խնդիրների վերաբերյալ,
- դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցական կրթական հաստատության մանկավարժի ընդհանուր նկարագիրը
- ե. ճիշտ է ներկայացնում մանկավարժական մտքի զարգացման առանձնահատկությունները, հեղինակների մանկավարժական հայացքների վերլուծությունը:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է նախագծերի պաշտպանության միջոցով:

Ուսուցման ընթացքում ուսանողին հանձնարարվում է 3 նախագիծ՝

- կազմել ՀՀ կրթական համակարգի կառուցվածքի գծապատկերը,
- հետազոտական նախագիծ ներկայացնել դաստիարակի մասնագիտական բնութագրի մասին՝ օգտվելով Մ. Մոնտեսորիի, Ֆրենեի և Պիաժեի և այլ հայտնի մանկավարժների աշխատություններից
- համացանցից հանել և ընկերներին ներկայացնել նախադպրոցական կրթությանը վերաբերող մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներին վերաբերող մեկ նյութ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է նշված աշխատանքները:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ համացանցին միացված համակարգիչ, ՀՀ կրթության մասին օրենքը, Նախադպրոցական

կրթության մասին օրենքը, «Նախադպրոցական կրթության 2008-2015թթ. ռազմավարությունը», նշված հեղինակների աշխատությունները:

#### **Ուսուցման երևչեակվորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության բովանդակությունն ու մեթոդիկան:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. Ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական դաստիարակության խնդիրները` կուլտուր-հիգենիկ ունակությունների ձեռք բերումը, երեխայի օրվա ռեժիմի և օրգանիզմի կոփման կազմակերպումը,

բ. Ճիշտ է ներկայացնում մտավոր դաստիարակության խնդիրները` հիմնվելով երեխայի զգայական դաստիարակության և հոգեկան գործընթացների զարգացուման վրա,

գ. Ճիշտ է ներկայացնում բարոյական դաստիարակության խնդիրները` երեխային հաղորդակից դարձնել համամարդկային և սոցիալական արժեքների, ձևավորել բարոյական վարքագիծ,

դ. Ճիշտ է ներկայացնում աշխատանքային դաստիարակության խնդիրները` երեխայի մեջ աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի ձևավորում, աշխատանքի արդյունքը գնահատելու կարողություն և աշխատելու պահանջմունք,

ե. Ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակները` երեխայի էկոլոգիական գիտակցության, մտածելակերպի և վարքագծի ձևավորում,

զ. Ճիշտ է ներկայացնում գեղագիտական դաստիարակության խնդիրները` երեխաների գեղարվեստական մտածողություն, ստեղծագործական երևակայության զարգացում և գեղագիտական ճաշակի ձևավորում:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հետազոտական նախագծի միջոցով.

1. նախադպրոցականի գործունեության ձևերի ինտեգրում,
2. նախադպրոցականի ազատ գործունեության կազմակերպումը նախակրթարանում
3. նախադպրոցականի ազատ գործունեության կազմակերպման խնդիրները
4. իրական գործունեության միջոցով դաստիարակության իրականացման մասին,
5. ռոդարիական մեթոդներով երեխայի ստեղծագործական երևակայության զարգացման մասին

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է նշված թեմաներով նախագծերից առնվազն 3-ը:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, տեղեկատու գրականություն և նախադպրոցականի զարգացման կրթական ծրագրեր:



## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3**

Իմանալ վաղ տարիքի երեխաների զարգացման ու դաստիարակության առանձնահատկությունները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. ճիշտ է ներկայացնում վաղ տարիքի երեխաների խնամքի կազմակերպումը,

բ. ճիշտ է ներկայացնում մանկավարժական այն սկզբունքներն ու մեթոդներն, որոնք նպաստում են երեխայի խոսքի, մտածողության և ինքնուրույնության զարգացմանը,

դ. ճիշտ է ներկայացնում երեխաների առարկայական գործունեությունը, որպես համատեղ խաղային գործունեության նախապատրաստման գործընթացը:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների), հարց ու պատասխանի միջոցով.

Ուսանողը երեխայի գործունեության կազմակերպմանը վերաբերող փոքր հետազոտական աշխատանքներ է ներկայացնում (2 -3 համակարգչային էջ)

- երեխայի ինքնուրույնության ձևավորումը և զարգացումը նախակրթարանում
- ինքնուրույնությունը՝ երեխայի ազատության պարտադիր պայման
- ազատություն գործունեության մեջ՝ Մ. Մոնտեսորի
- բանավոր խոսք - ստեղծագործական երևակայություն - ազատ մտածողություն՝ Ջ. Ռոդարի
- գիտելիքի ձեռքբերում գործունեության արդյունքում՝ Ս. Ֆրենե
- կրթել՝ նշանակում է ստեղծագործելու հնարավորություններ ընձեռել: Ժ. Պիաժե

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է առնվազն երեք աշխատանք:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մանկավարժական և տեղեկատու գրականություն, նախադպրոցականի զարգացման կրթական ծրագրեր:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 18 ժամ

Գործնական աշխատանք՝ 17 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանալ խաղային գործունեության առանձնահատկությունները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. ճիշտ է ներկայացնում խաղի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում,
- բ. ճիշտ է ներկայացնում խաղի առանձնահատկությունները, դրա կառուցվածքային տարրերը,
- գ. ճիշտ է ներկայացնում խաղի տեսակները, խաղալիքի ընտրությունը տարբեր տարիքային խմբերի համար,
- դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի խաղային գործունեություն կազմակերպման և ղեկավարման առանձնահատկությունները՝ երեխաների մեջ ձևավորելով համատեղ գործելու կարողություններ, ապահովելով նրանց համակողմանի զարգացումն ու դաստիարակությունը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով: Ուսանողը տարբեր աղբյուրներից հավաքում և կազմում է զարգացնող, շարժուն, ազգային, մարզական խաղերի փոքրիկ ժողովածու՝ նշելով յուրաքանչյուրի խաղի նպատակը կամ նպատակները (յուրաքանչյուր տեսակից՝ 3 խաղ): Կուրսում և մասնագիտական պրակտիկայի ընթացքում կազմակերպում է մեկական խաղ նշված յուրաքանչյուր տեսակից: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է նշված ժողովածուն և կազմակերպում նշված խաղերը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, խաղադարաններ և մանկական խաղերի տարբեր ժողովածուներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 8 ժամ
- Գործնական աշխատանք՝ 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Իմանալ ընտանիք-մանկապարտեզ-դպրոց համագործակցության նշանակությունն ու կազմակերպման ձևերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականին դպրոցին պատրաստ լինելու աստիճանը՝ կիրառելով հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդներ,
- բ. ճիշտ է ներկայացնում երեխային դպրոցին ինտելեկտուալ և սոցիալանձնային պատրաստության ուղղությամբ մշակված չափանիշները,
- գ. ճիշտ է ներկայացնում ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության նշանակությունը, աշխատանքի կազմակերպման տարբեր ձևերն ու միջոցները,
- դ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականին դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելու խնդիրները՝ երեխաների ֆիզիկական պատրաստականության ապահովում, հուզականային ոլորտի ակտիվացում, ուսումնառության գործընթացի հանդեպ որոշակի վերաբերմունքի մշակում և գիտակցաբար սովորելու ցանկության ստեղծում:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման ընթացքում ուսանողը պատրաստում է գծապատկերներ «Նախադպրոցական կրթության մասին օրենքի պահանջները և դրանց իրականացման մեթոդները, միջոցները»: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կներկայացնի նշված գծապատկերները և կմեկնաբանի: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է գործնական աշխատանքը և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում հարցերին:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը և նախադպրոցականի զարգացման տարբեր ծրագրեր:

## **ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 6.**

Իմանալ մանկավարժական գործընթացի կազմակերպման ու ղեկավարման առանձնահատկությունները նախադպրոցական հաստատություններում:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. կարողանում է ճիշտ և ստեղծագործաբար օգտվել նախադպրոցական դաստիարակության տարբեր ծրագրերից,

բ. ճիշտ է ներկայացնում դաստիարակ-երեխա փոխներգործությունը՝ կարևորելով զարգացնող միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հետազոտական նախագծի ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով. Ուսանողը հետազոտական նախագիծ է ներկայացնում՝ համեմատելով նախադպրոցականի զարգացմանը վերաբերող տարբեր կրթական ծրագրեր՝ կենտրոնանալով 2 կարևոր սկզբունքների վրա.

- պասիվ ուսուցում
- գիտելիքի ձեռքբերում ուղղորդված գործունեության միջոցով՝ խաղ, աշխատանք, փորձեր, գեղարվեստական գործունեություն և եզրակացություններ է կատարում:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է հետազոտական աշխատանքը՝ ամբողջական ներկայացնելով կատարման չափանիշների հարցերը:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական, տեղեկատու գրականություն և նախադպրոցականի զարգացման տարբեր ծրագրեր:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 9 ժամ

Գործնական աշխատանք՝ 10 ժամ

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝** ՆԿԴ-04-09-05

### **ՆՊԱՏԱԿԸ՝**

Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցանման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:

### **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ**

Տեսական պարապմունք՝ 18 ժամ

Գործնական աշխատանք՝ 18 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

Այս մոդուլի յուրացման համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

### **Արդյունքները**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունները
2. իմանա էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները
3. իմանա էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը
4. դրսևորի էկոլոգիական վարքագիծ ամենօրյա գործունեության մեջ:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվելու է սահմանված յուրաքանչյուր արդյունքի համար չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում:

#### **Արդյունք 1.**

Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները

#### **Կատարման չափանիշները**

1. Ճիշտ է ներկայացնում էկոլոգիան որպես բնագիտական, սոցիալական գիտություն և նրա կապը այլ գիտությունների հետ

2. Ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա
3. Ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները

### **ՉԱՐՅԱՏԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական հիմնական հասկացությունների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է սահմանում էկոլոգիան որպես գիտություն, գիտի նրա կապն այլ գիտությունների հետ, կարողանում է բացատրել էկոլոգիական տարբեր գործոնների փոխազդեցության մեխանիզմը, տարբերակում է էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- |                     |       |
|---------------------|-------|
| Տեսական պարապմունք՝ | 4 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 4 ժամ |

### **Արդյունք 2.**

Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները

#### **Կատարման չափանիշները՝**

1. Ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները
2. Ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդրի էությունը
3. գիտի ՉՅ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ՉՅ «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը
4. գիտի անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները:

### **ՉԱՐՅԱՏԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր Երկրագնդի հիմնական էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց ծնող պատճառների վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, ճիշտ է թվարկում ժամանակակից հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, ՉՅ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, գիտի «Կարմիր գիրք» նշանակության ու անձի էկոլոգիական իրավունքների ու պարտականությունների մասին:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման

չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, մասնավորապես ՀՀ «Կարմիր գիրքը», անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

### **Արդյունք 3.**

Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը

### **Կատարման չափանիշները՝**

1. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը
2. գիտի էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ
3. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր էկոլոգիական դաստիարակության նպատակի, բովանդակության ու նշանակության մասին: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն, սահմանում է էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, կարողանում է ընկալել էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, կարևորում է էկոլոգիական դաստիարակության դերը մարդու ամենօրյա գործունեության մեջ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է թեստերի, գրավոր աշխատանքի կամ հարցուպատասխանի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

#### **Արդյունք 4.**

Դրսևորել է կոլոգիական վարքագիծ ամենօրյա գործունեության մեջ:

#### **Կատարման չափանիշները՝**

1. Կարողանում է ճիշտ կողմնորոշվել և համապատասխան լուծումներ տալ էկոլոգիական իրավիճակային խնդիրներին:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվեն իրավիճակային խնդիրներ, որոնց նա պետք է տա համապատասխան լուծումներ:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է դերային խաղի կամ ուսուցման այլ ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը իրավիճակային խնդիրը ճիշտ է լուծում կամ տալիս է անհրաժեշտ հիմնավորում իր ենթադրյալ գործողությունների իրականացման համար:

#### **ՄԵԹՈԴՎՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսակն և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ գրեթե անկախ պիտույքներ, պինդվանդ, ֆլիպչարթ, պլակատներ, նկարներ, գծապատկերներ, համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր: Հնարավորության դեպքում ուսումնական գործընթացը ցանկալի է կազմակերպել լսարանից դուրս՝ բնության գրկում, արտադրական կազմակերպությունում, այլուր:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

#### **ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԵԿԴ 04-09 – 006

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժԱՄ

Տեսական պարապմունք՝ 44 ժամ

Գործնական աշխատանք՝ 28 ժամ

#### **ՆՊԱՏԱԿԸ՝**

Սողունը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա բնության դերը նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման գործում, կտիրապետի երեխաներին բնության հետ ծանոթացնելու, բույսերը և կենդանիներին խնամելու մեթոդներին ու ձևերին:

#### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝**

Անհրաժեշտ է, որ այս մոդուլին նախորդի «Նախադպրոցական մանկավարժություն» մոդուլը:

## **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլին ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. իմանա տեղեկություններ կենդանի և անկենդան բնության մասին
- 2 իմանա բնության դերն ու նշանակությունը երեխայի կյանքում
3. կիրառել երեխաներին բնության հետ ծանոթացնելու մեթոդները
4. իմանա բնության հետ ծանոթացման աշխատանքների կազմակերպման ձևերը
5. կարողանա ներկայացնել բնության անկյան կազմակերպումը տարիքային տարբեր խմբերում
6. կարողանա նկարագրել մանկապարտեզի հողամասի ձևավորումը և կանաչապատումը:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մուդուլի կատարողականը գնահատվելու է հաշվի առնելով յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումը

## **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ տեղեկություններ կենդանի և անկենդան բնության մասին

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

1. Գիտի տիեզերքի կառուցվածքը,
2. կարողանում է ներկայացնել երկրագնդի ոլորտային կառուցվածքը,
3. կարողանում է բացատրել բնական երևույթները,
4. կարողանում է ներկայացնել կենդանիների ու բույսերի կառուցվածքային առանձնահատկությունները:

## **ԳՆՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի յուրացումը կատարվում է թեստի միջոցով: Թեստի հարցերը դուրս են բերվում կատարման չափանիշներից: Արդյունքը համարվում է յուրացված, երբ ուսանողը ճիշտ է պատասխանում թեստի հարցերին:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է մասնագիտական գրականություն:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ:

## **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանա բնության դերն ու նշանակությունը երեխայի կյանքում

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. կարողանում է բացատրել բնության դերը երեխաների մոտ շրջապատող աշխարհի մասին իրական գիտելիքներ ու պատկերացումներ ձևավորելու գործում
- բ. կարողանում է բացատրել բնության դերը երեխայի իմացական ընդունակությունների, հետաքրքրասիրության և դիտունակության զարգացման գործում



գ. կարողանում է հիմնավորել նախադպրոցական տարիքում բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի ձևավորման անհրաժեշտությունը

դ. կարողանում է բացատրել բնության, միջավայրի խնամքի դերը նախադպրոցականի մոտ աշխատասիրություն, պատասխանատվություն, էկոլոգիական մշակույթ ձևավորելու գործում

ե. կարողանում է բացատրել բնության նշանակությունը շրջապատում գեղեցիկը տեսնելու և այն պահպանելու ունակության ձևավորման գործում

զ. կարողանում է ներկայացնել բնության մեջ կատարվող աշխատանքի և խաղերի դերը երեխայի ֆիզիկական ճիշտ զարգացման և առողջության ամրապնդման գործում:

### **ՓԼՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Ուսանողին կտրվեն հարցեր կատարման չափանիշներին համապատասխան և կառաջադրվեն ներկայացնել բնության մեջ կազմակերպվող խաղեր և աշխատանքներ: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, երբ ուսանողը ճիշտ կպատասխանի առաջադրված հարցերին և կներկայացնի բնության մեջ կազմակերպվող խաղեր և աշխատանքներ:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է մասնագիտական և մեթոդական գրականություն, անհրաժեշտ պարագաներ՝ բնության մեջ կազմակերպվող խաղերը և աշխատանքներն իրականացնելու համար:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ:

Գործնական աշխատանք՝ 4 ժամ:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանա երեխաներին բնության հետ ծանոթացնելու մեթոդները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. կարողանում է բացատրել խոսքային, զննական և գործնական մեթոդների ընտրությունը կապված երեխաների տարիքային խմբի և տարվա եղանակի հետ,

բ. կարողանում է ներկայացնել երեխայի բնագիտական գործունեության /ծառ ու ծաղիկ տնկել, խնամել, սերմեր ցանել, ծիսական բույսեր աճեցնել, բնագիտական տարբեր փորձեր կատարել /դիտումների անցկացումը խմբասենյակում, հողամասում և բնության մեջ/,

գ. կարողանում է նկարագրել այն խաղերը, /դիդակտիկ, ստեղծագործական, շարժական/ որոնք հարստացնում են երեխաների գիտելիքները բույսերի, կենդանիների և բնության երևույթների մասին,

դ. կարողանում է բացատրել գեղարվեստական ստեղծագործությունների, զրույցների դերը բնության մասին նոր պատկերացումների ձևավորման գործում,

ե. կարողանում է ներկայացնել բնության, շրջակա միջավայրի պահպանման հետ կապված երեխայի գործունեությունը:

**ԳՆՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեն և հանձնարարություններ ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, երբ ուսանողը ճիշտ կպատասխանի կատարման չափանիշներից բխող հարցերին և ցույց կտա բնագիտական գործողություններ դասասենյակում և հողամասում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է մասնագիտական և մեթոդական գրականություն և համապատասխան պարագաներ՝ ծառ, ծաղիկ տնկելու, սերմեր ցանելու և բնագիտական փորձեր կատարելու համար:

**ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ:

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանալ բնության հետ ծանոթացման աշխատանքների կազմակերպման ձևերը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. կարողանում է ներկայացնել բնության հետ ծանոթացման պարապմունքների անցկացումը տարիքային տարբեր խմբերում,
- բ. գիտի բնագիտական էքսկուրսիաների նշանակությունը և դրանց կազմակերպման մեթոդիկան,
- գ. կարողանում է բացատրել նպատակային զբոսանքների դերը բնության այն երևույթների հետ ծանոթացման գործում, որոնք պահանջում են երկար ժամանակ,
- դ. կարողանում է ներկայացնել կենդանիների, բնության երևույթների, տարվա եղանակների, բույսերի աճի, այլ փոփոխությունների դիտարկման, հետազոտման մեթոդները,
- ե. կարողանում է ներկայացնել բնագիտական գործունեության միջոցով գիտելիք, կենսափորձ ձեռք բերելու առավելությունները:

**ԳՆՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեն և հանձնարարություններ ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, երբ ուսանողը ճիշտ կպատասխանի կատարման չափանիշներից բխող հարցերին, կկարողանա նկարչության, ապլիկացիայի, երգի և բանավոր խոսքի միջոցով նկարագրել բնությունը և բնության երեւույթները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է մասնագիտական և մեթոդական գրականություն, նկարչության և ապլիկացիայի համար անհրաժեշտ պարագաներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ ներկայացնել բնության անկյան կազմակերպումը տարիքային տարբեր խմբերում:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. գիտի բնության անկյան նշանակությունը բնության հետ երեխաների անընդհատ և երկարատև շփման գործում

բ. գիտի տարիքային տարբեր խմբերում բնության անկյան համար բույսերի և կենդանիների ընտրությանը ներկայացվող պահանջները

գ. կարողանում է ներկայացնել սենյակային բույսերի խնամքի պայմանները հողի պատրաստում, տնկում, ջրում, ջրցանում, տեղափոխում, բազմացում

դ. կարողանում է բացատրել բնության անկյան կենդանիների և թռչունների խնամքի պայմանները. կենդանիների և թռչունների կերակրում, վանդակի մաքրում:

#### **ԳՆՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր և հանձնարարություններ ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացումը գնահատվում է տեսական պարապմունքի և գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, երբ ուսանողը ճիշտ է պատասխանում կատարման չափանիշներից դուրս բերված հարցերին, կարողանում է ստեղծել բնության անկյուն, խնամել բույսեր և կենդանիներ:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասի անցկացման համար անհրաժեշտ է մեթոդական գրականություն և կենդանի անկյուն ստեղծելու բոլոր պարագաները, վանդակներ, ակվարիումներ, կենդանի օրգանիզմներ՝ սենյակային բույսեր, ակվարիումային ձկներ, ալեծածան թութակներ, ծովախոզուկ, այլ կենդանիներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 6.**

Կարողանալ նկարագրել մանկապարտեզի հողամասի ձևավորումը և կանաչապատումը

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. կարողանում է բացատրել մանկապարտեզի հողամասի ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը տարվա տարբեր եղանակներին,

բ. կարողանում է ներկայացնել երեխաների մասնակցությունը հողամասի կանաչապատման աշխատանքներին,

գ. կարողանում է բացատրել բանջարանոցային բույսերի ընտրությունը և դրանց խնամքը սերմերի, սածիլների տնկում, ջրում, սնուցում, բերքի և սերմերի հավաքում,

դ. կարողանում է բացատրել ծաղկանոցի ձևավորումը, ծաղկաթմբերի պատրաստումը, միամյա, երկամյա, բազմամյա ծաղիկների ու դեկորատիվ բույսերի խնամքի յուրահատկությունները,

ե. գիտի ծառերի ու թփերի այն տեսակները, որոնք կարող են աճել մանկապարտեզի հողամասում,

զ. գիտի տվյալ շրջանում ձմեռող թռչունների անունները, կարողանում է բացատրել, թե ինչպես են թռչունների համար բույն և կերակրասեղան պատրաստում:

## **ՉԼՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, երբ ուսանողը ճիշտ է պատասխանում կատարման չափանիշներից դուրս բերված հարցերին և կարողանում է երեխաներին մասնակից դարձնել մանկապարտեզի հողամասի աշխատանքներին:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Դասի անցկացման համար անհրաժեշտ մեթոդական գրականություն, բույսերի և թռչունների նկարազարդ որոշիչներ, հողամասի մշակման համար անհրաժեշտ պարագաներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 4 ժամ

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝** ՆԿԴ 04-09 – 007

## **ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա զարգացման տարբեր շեղումներ ունեցող երեխաների առանձնահատկությունները, կկարողանա կիրառել նրանց ուսուցման, դաստիարակության և սոցիալականացման մեթոդներն ու միջոցները:

## **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ**

Տեսական պարապմունք՝ 22 ժամ

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

## **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ**

Այս մոդուլը յուրացնելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Նախադպրոցական մանկավարժություն», «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով» «Նախադպրոցական հոգեբանություն» մոդուլները:

## **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է

1. Իմանա հատուկ մանկավարժության բովանդակությունը և տեսական հիմքերը,
2. Իմանա հատուկ մանկավարժության դիդակտիկական հիմունքները, հատուկ կրթության սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները,
3. Իմանա մտավոր զարգացման խանգարումներով երեխայի կրթության առանձնահատկությունները,
4. Իմանա խոսքի խանգարումներով երեխայի հետ տարվող մանկավարժական աշխատանքի բովանդակությունը,
5. Իմանա լսողության խանգարումներ ունեցող երեխայի ուսումնադաստիարակչական, շտկողական աշխատանքի բովանդակությունը, մեթոդները,
6. Իմանա տեսողության խանգարումներ ունեցող երեխայի շտկողական աշխատանքի մեթոդիկան:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվելու է սահմանված յուրաքանչյուր արդյունքի համար չափանիշների բավարար մակարդակի ապահովման դեպքում:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ ուսումնառության արդյունքների.

## **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանա հատուկ մանկավարժության բովանդակությունը և տեսական հիմքերը

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. Ճիշտ է բացատրում հատուկ մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները,
2. Ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության հիմնական հասկացությունները,
3. Ճիշտ է ներկայացնում ժամանակակից հատուկ մանկավարժության բնագավառները:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են հատուկ մանկավարժության օբյեկտը, առարկան և խնդիրները, հիմնական հասկացությունները, ժամանակակից բնագավառները:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ հատուկ մակավարժության դիդակտիկական հիմունքները, հատուկ կրթության սկզբունքները, մեթոդներն ու տեխնոլոգիաները

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության դիդակտիկական սկզբունքների նշանակությունը,
2. ճիշտ է օգտվում հատուկ մանկավարժության մեթոդներից և տեխնոլոգիաներից,
3. ճիշտ է օգտվում հատուկ մանկավարժության հիմնական միջոցներից շտկողական ուսուցման գործընթացում

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 90%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ մտավոր զարգացման խանգարումներով երեխայի կրթության առանձնահատկությունները

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. գիտի և ճիշտ է բացատրում մտավոր զարգացման խանգարումներով երեխայի հետ տարվող շտկողական ուսուցման և դաստիարակության բովանդակությունը,
2. ճիշտ է տարբերակում ուսուցման բովանդակությունն ու պահանջները մտավոր զարգացման խանգարումներ ունեցող տարբեր խմբերի երեխաների (մտավոր հետամնաց, հոգեկան զարգացման հապաղում) համար,
3. գիտի մտավոր զարգացման խանգարումներով երեխայի դիդակտիկական կոնկրետ պահանջները

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով.

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են զարգացման խանգարումներով երեխայի հետ տարվող շտկողական ուսուցման և դաստիարակության բովանդակությունը, ուսուցման բովանդակությունն ու պահանջները մտավոր զարգացման խանգարումներ ունեցող տարբեր խմբերի երեխաների համար:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, զծապատկերներ, աղյուսակներ:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք` 4 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանալ խոսքի խանգարումներով երեխայի հետ տարվող մանկավարժական աշխատանքի բովանդակությունը

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը`

1. ճիշտ է բացատրում խոսքի զարգացման խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները,
2. գիտի խոսքի խանգարումներից և գիտի շտկողական ուսուցման և դաստիարակության առանձնահատկությունները,
3. ճիշտ է օգտվում խոսքի զարգացման խանգարումներով երեխայի ուսուցման և դաստիարակության հատուկ մեթոդներից և միջոցներից:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են խոսքի զարգացման խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները, մեթոդներն ու միջոցները:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

### **ԱՐԴՅՈՒՔ 5.**

Իմանալ լսողության խանգարումներ ունեցող երեխայի ուսումնադաստիարակչական, շտկողական աշխատանքի բովանդակությունը, մեթոդները:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում է լսողության խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները,
2. ճիշտ է ներկայացնում լսողության խանգարումները, դրանց էությունը և գիտի դրանց շտկողական ուսուցման և դաստիարակության առանձնահատկությունները,
3. գիտի և ճիշտ է օգտվում լսողության խանգարումներով երեխայի ուսուցման և դաստիարակության հատուկ մեթոդներից և միջոցներից,
4. գիտի և ճիշտ է օգտվում մատնախոսության, ժեստերի լեզվից, գաղափար ունի շրթունքներից կարդալու մասին,
5. ճիշտ է օգտվում լսողության խանգարումներով երեխայի շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներից:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են լսողության խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները, դրանց շտկողական ուսուցման և դաստիարակության առանձնահատկությունները, լսողության խանգարումներով երեխայի ուսուցման և դաստիարակության հատուկ մեթոդներն ու միջոցները:

#### **ՄԵԹՈՂՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

### **ԱՐԴՅՈՒՔ 6**

Իմանալ տեսողության խանգարումներ ունեցող երեխայի շտկողական աշխատանքի մեթոդիկական



## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Ուսանողը՝

1. ճիշտ է բացատրում տեսողական խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները,
2. գիտի տեսողական խանգարումների դրսևորումները և գիտի դրանց շտկողական ուսուցման և դաստիարակության առանձնահատկությունները,
3. ճիշտ է օգտվում է տեսողության խանգարումներով երեխայի ուսուցման և դաստիարակության հատուկ մեթոդներից ու միջոցներից,
4. գիտի և ճիշտ է օգտվում բրայլյան այբուբենից,
5. ճիշտ է օգտվում տեսողության խանգարումներով երեխայի շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներից:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են տեսողական խանգարումներ ունեցող երեխայի հետ տարվող շտկողական աշխատանքի բովանդակությունը, ուղղությունները, առանձնահատկությունները, աշխատանքի հատուկ մեթոդներն ու միջոցները, շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, շտկողական գործունեության ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝** ՆԿԴ 04-09-08

## **ՆՊԱՏԱԿԸ՝**

ա. ուսանողներին ծանոթացնել հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներին, այդ նմուշները սաների զարգացման գործընթացում օգտագործելու հնտություններ ձևավորել,

բ. զարգացնել ուսանողների ստեղծագործական երևակայությունը, կատարելագործել նրանց լեզվազգացողությունը և լեզվամտածողությունը:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 108 ժամ**

Տեսական պարապմունք` 30 ժամ

Գործնական աշխատանք` 78 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ`**

Մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային հմտություններ և գիտելիքներ չեն պահանջվում:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`**

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է`

1. իմանա հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշները և դրանցից անգիր իմանա այդ նպատակով առաջարկվող նյութերը,
2. կարողանա հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշներով ուսումնական նյութեր ստեղծել, դրանք օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս
3. կարողանա մանկական ստեղծագործությամբ աշխատելու նախագիծ կազմել, իրականացնել և ներկայացնել արդյունքները
4. իմանա ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներ և կարողանա դրանք կիրառել մանկական ստեղծագործություններով աշխատելիս
5. կարողանա ծեսի իրականացման աշխատանքային նախագիծ կազմել և իրականացնել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1**

Իմանալ հայ և համաշխարհային մանկագրության, բանահյուսության դասական նմուշները և դրանցից անգիր իմանալ այդ նպատակով առաջարկվող նյութերը:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. գիտի հայ և համաշխարհային մանկագրության դասականներին և նրանց առավել հայտնի ստեղծագործությունները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված ստեղծագործությունները,

բ. ճիշտ է ներկայացնում բանահյուսական ժանրերը և դրանց առանձնահատկությունները,

գ. գիտի հայ ժողովրդական բանահյուսության դասական նմուշները, անգիր գիտի այդ նպատակով առանձնացված նյութերը,

դ. կարողանում է հայ և համաշխարհային մանկագրության, հայ ժողովրդական բանահյուսության ստեղծագործությունները տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվում է բանավոր ստուգման և գործնական աշխատանքի միջոցով: Արդյունքի բանավոր ստուգում` ուսուցման ընթացքում ուսանողը միայնակ` որպես ասացող, կամ ընկերների հետ ներկայացնում-խաղում է հանձնարարված ստեղծագործությունը:

Գրավոր ստուգում. ուսանողը ուսուցման ընթացքում ներկայացնում է այլ ժողովուրդների՝ հանձնարարված 2 ժանրի բանահյուսական ստեղծագործությունների հավաքանի:

Ուսուցման ավարտին ստուգումը կատարվում է թեսթի միջոցով՝ տրվում են ստեղծագործությունների վերնագրեր կամ նմուշներ և առաջարկվում դրանք գրել համապատասխան ժանրի սյունակում: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է ստեղծագործությունների առանձին հատվածներից ճանաչել այդ ստեղծագործությունների անվանումները և հեղինակներին, անգիր գիտի անհրաժեշտ քանակությամբ նմուշներ և կարող է դրանք մանկավարժական տարբեր հնարքներով ներկայացնել լսարանին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ և ինքնուրույն աշխատանքներ: Արդյունքի ուսուցման համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական, մանկական, ազգագրական գրականություն, մեթոդական ձեռնարկներ:

### **ՈւՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ  
Գործնական աշխատանք՝ 30 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Կարողանալ մանկական գրականության նմուշներով ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը կարողանում է

1. կազմել առաջադրանքների և անհրաժեշտ մեթոդների կիրառման համակարգ՝ ընտրված ստեղծագործությամբ աշխատելու և այն ամբողջապես յուրացնելու համար
2. ուսումնական նպատակներով մշակել անհրաժեշտ ստեղծագործությունը
3. մանկական գրականության յուրացման ընթացքում կարողանում է ինտեգրել գործունեության տարբեր տեսակներ
4. մանկական գրականությամբ աշխատելու արդյունքում նոր նյութեր ստեղծել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հետազոտական նախագծի իրականացման արդյունքով: Ուսուցման ընթացքում ուսանողն ընտրում 5 ստեղծագործություն, կազմում է դրանցով աշխատելու ամբողջական նախագիծ, որում ներառված կլինեն նախադպրոցական հաստատությունում երեխայի գործունեության տարբեր ձևեր՝ բանավոր խոսք, նկարչություն, տեխնոլոգիա, երգ-պար, այլն: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է 5 ստեղծագործություն մշակել որպես ուսումնական նյութ և ներկայացնել լսարանին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում, գործնական և ինքնուրույն աշխատանքներ: Անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, մեթոդական ձեռնարկներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Կազմել մանկական ստեղծագործությամբ աշխատելու նախագիծ, իրականացնել և ներկայացնել արդյունքները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐ**

ա. կարողանում է մանկական ցանկացած ստեղծագործությամբ աշխատելու (ուսուցանելու) նախագիծ կազմել,

բ. կարողանում է նախանշել իր աշխատանքի, խնդիրները, քալերը, իրականացվելիք մեթոդները, գործունեության այլ ձևերի ինտեգրումը, ճամփորդություններ- էքսկուրսիաները, վերջնական արդյունքները,

գ. կարողանում է նախանշել աշխատանքի արդյունքների ներկայացման ձևերը:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է ուսանողի կողմից մշակված նախագծի և նրա իրականացման և ներկայացման հիման վրա:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը իրականացնում է առնվազն մեկ նախագիծ, նախանշելով իր աշխատանքի

- խնդիրները,
- քալերը,
- իրականացվելիք մեթոդները,
- գործունեության այլ ձևերի ինտեգրումը,
- ճամփորդություններ- էքսկուրսիաները
- վերջնական արդյունքները

ներկայացման ձևերը՝

- ցուցադրություններ
- փաթեթներ,
- ներկայացումներ,
- տոնակատարություններ,
- հրատարակումներ
- հաշվետվություններ
- թերթերի, գրքույկների ստեղծում

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունք և ինքնուրույն աշխատանք: Անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև համակարգչային տեխնիկա, լրացուցիչ գրենական պիտույքներ ու հարմարանքներ՝ պինդվանդ, ֆլիպչարտ:

#### **Ուսուցման երևչեակվորված ժամաքաևակ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Իմանալ ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքներ և կարողանալ դրանք կիրառել:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում ստեղծագործական երևակայությունը զարգացնող հնարքները և ուսման ընթացքում այդ մեթոդներով աշխատանքներ է կատարում,
- բ. տիրապետում է անգիր սովորեցնելու, գրական ստեղծագործություններով տարբեր խաղերի կազմակերպման, դրանց ստեղծման մեթոդներին ու հնարքներին և կիրառում է դրանք մասնագիտական փորձառության ժամանակ:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողը Ի. Ռոդարիի, Դ. Բիսեթի կամ հանձնարարված այլ հեքիաթներ մշակում է ստեղծագործական երևակայությունը զարգացնող մեթոդներով՝

- Ի՞նչ եղավ հետո... (ավարտում հեքիաթի շարունակում)
- Ի՞նչ կլինի, եթե ... (ստեղծագործության ավարտի փոփոխում)
- Ինչո՞ւ տերևը ծառ ունի (թարս հարցեր՝ թարս պատասխաններով)
- Հեքիաթների աղցան կամ շիլաշփոթ
- Ապակե մարդը (հեքիաթի հորինում առարկաների մասին՝ հաշվի առնելով այդ առարկաների առանձնահատկությունները)
- Ստեղծագործական երևակայության երկանդամ

և այդ մշակումներն իրականացնում կուրսում կամ մասնագիտական փորձառության ընթացքում:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողն իրականացնում է առնվազն մեկ մշակում:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ և ինքնուրույն պաշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական և մանկական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ (Ջ. Ռոդարի «Ստեղծագործական երևակայության քերականություն»), իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև տեխնիկական միջոցներ, տարբեր պիտույքներ:

#### **Ուսուցման երևչեակվորված ժամաքաևակ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ ծեսերի, տոների, այլ միջոցառումների իրականացման աշխատանքային նախագիծ կազմել և իրականացնել:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. գիտի ազգային ծեսերը, տոները և ծիսական արարողությունները, ծիսական պարագաները, ծեսերի առանձնահատկությունները,

բ. օգտվելով համապատասխան գրականությունից՝ կարողանում է մանկական ծեսի, տոնի, խաղերի իրականացման աշխատանքային նախագիծ կազմել, ծիսակատարության, տոնակատարության սցենարներ գրել և իրականացնել,

գ. կարողանում է սցենարի վերածել հեղինակային և բանահյուսական մանկական ստեղծագործությունները,

դ. կարողանում է մանկական ստեղծագործությունների հիման վրա բեմադրություններ կազմակերպել, խաղում է իր բեմադրած ներկայացումներում:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով:

Ուսանողը ուսուցման ընթացքում համակուրսեցիների հետ կազմում է ազգային 2 ծեսի իրականացման ծրագիր և իրականացնում դրանք: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը իր կազմած ծրագրով ընկերների հետ իրականացնում է ազգային 2 ծես:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ և ինքնուրույն աշխատանք: Անհրաժեշտ են համապատասխան ազգագրական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, իսկ ներկայացման ձևից կախված՝ նաև համապատասխան ձայնագրություն, տեխնիկական միջոցներ և այլն:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

### **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՆԿԴ 04-09-09

### **ՆՊԱՏԱԿԸ՝**

Մոդուլը մշակվել է ուսանողների խոսքի զարգացման, նրանց ստեղծագործական ունակությունների բացահայտման և զարգացման, ուսանողների կողմից այդ ունակությունները զարգացնող մեթոդների և հմարքների յուրացման, ուսանողների լեզվազգացողության և լեզվամտածողության կատարելագործման, հաղորդակցման հմտությունների զարգացման նպատակներով:

<b>ՄՈՂՈՒԼԻ ՏԵԿՆՈԴՈՒԹՅՈՒՆԸ՝</b>	108	ժամ
Տեսական պարապմունք՝	36	ժամ
Գործնական աշխատանք՝	72	ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ՝**

Մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Մանկական գրականություն և բանահյուսություն» մոդուլը:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

1. համապատասխան ոճով կառուցել գրավոր և բանավոր խոսքը՝ ճշտորեն կիրառելով մայրենի լեզվի քերականական կանոնները
2. Կարողանալ ՏՀՏ կիրառմամբ խմբագրել է իր և ընկերների խոսքը:
3. Կարողանալ գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ՝ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով:
4. Կարողանա տարբեր նպատակներով և ուղղվածության տեքստեր կազմել:
5. Կարողանա միտքը հստակ, հասկանալի ձևակերպել, պարզ, հակիրճ, գրագետ, ստեղծագործաբար կառուցել իր խոսքը:
6. Կարողանալ թարգմանություններ կատարել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Համապատասխան ոճով կառուցել գրավոր և բանավոր խոսքը՝ ճշտորեն կիրառելով մայրենի լեզվի քերականական կանոնները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է խոսքը կառուցել լսարանին, խնդրին (թեմային), առարկային իրավիճակին համապատասխան,
- բ. կարողանում է խոսքը հակիրճ կառուցել՝ առանց ավելորդաբանությունների,
- գ. ծանոթ է մանկան ուղղված գրավոր և բանավոր խոսքի լեզվական առանձնահատկություններին, պատմություններ, հեքիաթներ հորինում և տարբեր միջոցներով ներկայացնում դրանք,
- դ. կարողանում է որևէ իրական դեպքի մասին մանրամասն և հակիրճ պատմել, օրագիր է գրում՝ նկարագրելով օրը, օրվա առանձին դեպքերը, տպավորությունները, տրամադրությունները, կատարած աշխատանքները...
- ե. կարող է վերլուծական հոդվածներ գրել իր կարդացած կամ իրեն առաջարկված նյութի վերաբերյալ՝ փաստարկաված և հանդիչ շարադրելով իր դիտարկումները, կարծիքը, եզրակացություններ:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա:

Ուսուցման ընթացքում ուսանողին կտրվեն գործնական առաջադրանքներ՝

- ստեղծագործական՝ հեքիաթներ, տարբեր թեմաներով պատմություններ հորինել,
  - նկարագրական՝ նկարագրել տարբեր երևույթներ՝ բնական և հասարակական, միջավայր և այլն
  - վերլուծական՝ գրավոր պատմել առանձին դեպքերի, երևույթների, կարդացած նյութի, հեռուստատեսային հաղորդման մասին՝ ընդարձակ և հակիրճ, վերլուծել դրանք, կարծիքներ հայտնել:
- Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կկատարի տրված բոլոր առաջադրանքների 80%-ը:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, տարբեր նյութեր լրագրերից և այլ աղբյուրներից, մանկական գրականություն:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Կարողանալ՝ ՏՅՏ կիրառմամբ խմբագրել է իր և ընկերների խոսքը:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է տարբերել լեզվական ճիշտ և սխալ կառույցները. գիտի առավել տարածված լեզվական սխալների ճիշտ տարբերակները,
- բ. կարողանում է տեղին գործածել մայրենի լեզվի բառապաշարի տարբեր շերտերը, (գրական – խոսակցական - բարբառային, ընդհանուր և սահմանափակ գործածության, մասնագիտական), դարձվածքները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերը և լեզվական այլ կառույցները,
- գ. կարողանում է աշխատել բառարաններով,
- դ. կարողանում է տեքստ խմբագրել՝ հանելով տեքստը ծանրացնող, տեքստին ոչինչ չտվող լեզվական ավելորդ միավորները կամ դրանք փոխարինելով համարժեք միավորներով:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա:  
Ուսուցման ընթացքում ուսանողին կտրվեն գործնական առաջադրանքներ՝ տրված տեքստերում ուղղել լեզվական սխալ կառույցները, տարբեր բնույթի տեքստեր թարգմանել, տեքստ գրել տրված լեզվական կառույցներով (դարձվածքներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, և այլն): Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կկատարի տրված առաջադրանքների 80%-ը:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, բառարաններ, համակարգիչներ, համացանցից օգտվելու հնարավորություն:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ



### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Կարողանալ գրավոր և բանավոր փոխադրել ցանկացած տեքստ՝ ուսումնական կոնկրետ առաջադրանք կատարելով:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է վերապատմել ցանկացած տեքստ՝ պահպանելով դրա լեզվական կառույցը և այլ առանձնահատկություններ,
- բ. կարողանում է պահպանել տեքստի իմաստային, կառուցվածքային և ոճական ամբողջականությունը,
- գ. կարողանում է տեքստը գրավոր և բանավոր փոխադրել որոշակի առաջադրանքներով՝ առանց մեկնաբանությունների, սեփական մեկնաբանություններով կամ վերլուծություններով, իր անունից, հեղինակի անունից, հերոսներից մեկի կամ նրա անունից, ում վերաբերում է տեքստը, տեքստի բովանդակությունից ելնելով՝ տեքստը վերապատմում է, դրականորեն տրամադրված անձի անունից, չեզոք անձի անունից, բացասականորեն տրամադրված անձի անունից,
- դ. կարողանում է տարբեր տեքստեր վերաշարադրել մանկան տարիքին, ընկալումներին, մտածողությանը համապատասխան լեզվով,
- ե. տարբեր ուսուցողական նպատակներով ընդարձակում կամ համառոտում է ցանկացած տեքստ:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում ուսանողին կտրվեն գործնական աշխատանքներ՝ տարբեր առաջադրանքներով (հերոսի անունից, իր անունից, դրական վերաբերմունքով, բացասական մեկնաբանությամբ, տարբեր պատճառաբանություններով, եզրակացություններ կատարելով, տարբեր մոտեցումներով) փոխադրել տրված տեքստերը:

Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կկատարի բոլոր առաջադրանքների առնվազն 70%-ը:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են մանկական ստեղծագործություններ, տարբեր բնույթի, բովանդակության տեքստեր:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 6 ժամ
- Գործնական աշխատանք՝ 12 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է տարբեր թեմաներով (քննարկմանը, բանավեճին, հանդիպմանը համապատասխան) նյութեր պատրաստել, տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկատվական նյութեր հավաքել, դրանք դասակարգել, մշակել,

- բ. տիրապետում է բանավոր հավաքներ վարելու կուլտուրային (լսել, հարգել ուրիշի կարծիքը, հետևել իր և մյուսների մտքի ընթացքին, հաշվի առնել և մշակել դիմացինի փաստարկները),
- գ. կարողանում է կիրթ, լսելի խոսք կառուցել և ներկայացնել, տիրապետում է խոսքի հնչերանգին,
- դ. կարողանում է պաշտոնական և այլ նամակներ, գրություններ, հաշվետվություններ գրել,
- ե. ճիշտ է գործածում մասնագիտական տերմինները, ձևակերպումները, լեզվական կառույցները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում ուսանողին կհանձնարարվի որևէ հրատապ (ակտուալ) թեմայի վերաբերյալ քննարկում կազմակերպել. նախապես տեղեկատվական նյութեր հավաքել, քննարկմանն համապատասխան մշակել այդ նյութերը, հաշվետվություն գրել կայացած քննարկման մասին կհանձնարարվի տարբեր իրավիճակների համար համապատասխան գործնական գրություններ գրել: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կկատարի բոլոր առաջադրանքները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք` 6 ժամ
- Գործնական աշխատանք` 12 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Տրամաբանորեն ներկայացնել իր դիտարկումները, հետազոտությունները և եզրակացությունները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

- ա. կարողանում է ցանկացած նյութ ներկայացնելիս խոսքը կառուցել իր ասելիքի տրամաբանությունը հաշվի առնելով,
- բ. կարողանում է իր դատողությունները ներկայացնել փաստարկներով և պատճառաբանություններով` խուսափելով ավելորդաբանություններից:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում ուսանողին կհանձնարարվի որևէ հրատապ (ակտուալ) թեմայի վերաբերյալ քննարկում կազմակերպել. նախապես տեղեկատվական նյութեր հավաքել, քննարկմանն համապատասխան մշակել այդ նյութերը, հաշվետվություն գրել կայացած քննարկման մասին կհանձնարարվի տարբեր իրավիճակների համար համապատասխան գործնական գրություններ, հաշվետվություններ գրել: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը մեկ քննարկում կազմակերպի և կատարի տրված գրավոր առաջադրանքների առնվազն 70%-ը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք:

Անհրաժեշտ են համապատասխան մասնագիտական գրականություն, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, համակարգչային տեխնիկա:

#### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

#### **Ուսուցման երաշխավորված ծրագրի 6**

Կարողանալ թարգմանություններ կատարել:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է թարգմանել տարբեր ոճերի և ժանրերի տեքստեր,
- բ. կարողանում է գտնել լեզվական կաղապարների համարժեքները իրեն ծանոթ լեզուներում,
- գ. կարողանում է պահպանել թարգմանվող գործի ռիթմիկ և լեզվական առանձնահատկությունները,
- դ. կարողանում է օգտվել տարբեր բառարաններից:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումը իրականացվելու է գործնական աշխատանքների հիման վրա: Ուսուցման ընթացքում ուսանողի նախընտրած օտար լեզվով տրվում է 3 բնույթի՝ գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական տեքստ՝ (1-2 համակարգչային էջ), որը նա թարգմանում և ներկայացնում է դասախոսին: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կատարում է բոլոր առաջադրանքները:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են տարբեր բնույթի տեքստեր, բառարաններ և համակարգիչ:

#### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

#### **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՆԿԴ 04-09-09

#### **ՆՊԱՏԱԿԸ՝**

- ա. զարգացնել ուսանողների աշխարհընկալումը համաշխարհային գրականության դասական ստեղծագործությունների միջոցով ,
- բ. ուսանողներին հնարավորություն տալ հաղորդակցվել համամարդկային արժեքների հետ, ընդլայնել նրանց աշխարհայացքը,
- գ. զարգացնել նրանց գեղագիտական ճաշակը,

դ.գարգացնել ուսանողների վերլուծական մտածողություն:

**ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 108 ժամ**

Տեսական պարապմունք` 36 ժամ

Գործնական աշխատանք` 72 ժամ

### **ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐԸ**

Սողուլը ուսումնասիրելու համար ուսանողնողը պետք է յուրացրած լինի „Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն“, մողուլը:

#### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Սողուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

1. ճանաչի համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները:
2. Իմանա գրական ժանրերը, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինի դրանց դասական նմուշներին:
3. Կարողանա ներկայացնել և փաստարկել գրական ստեղծագործությունների արժանիքները:
4. Կարողանա գրական երկի քննարկում կազմակերպել` գործածելով տարբեր մեթոդներ:

### **ԳՆԱՐԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

ճանաչել համաշխարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ուսանողը`

- ա. գիտի համախարհային գրականության դասականների լավագույն ստեղծագործությունները,
- բ. կարողանում է դասական ստեղծագործությունները ներկայացնել լսարանին` հաշվի առնելով լսարանի հետաքրքրությունները, հոգևոր պահանջները, հետաքրքրություն է առաջացնում ստեղծագործության նկատմամբ,
- գ. կարողանում է ընթերցել կամ արտասանել ընկերների համա

### **ԳՆԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Գնահատումը կատարվում է թեսթերի միջոցով: Ուսանողին տրվում են գրական ժանրերը, նա նշում է համապատասխան ստեղծագործությունները թեմաները, գրական ստեղծագործության հատվածներ, ստեղծագործության վերնագիրը և հեղինակին: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կատարասխանի 3 հարցից առնվազն 2-ին:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են հայ և համաշխարհային գրականության դասական նմուշներ, որոնք չեն ուսուցանվում դպրոցում:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 9 ժամ  
Գործնական աշխատանք՝ 18 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ գրական ժանրերը, ուղղությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթ լինել դրանց դասական նմուշներին:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. գիտի գրական ժանրերը, կարողանում է ներկայացնել գրական ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները, դրանց առավելություններն ու թույլ կողմերը,
- բ. ճիշտ է ներկայացնում գրական ուղղությունները, դրանցով գրված գրական ստեղծագործությունները,
- գ. ճիշտ է ներկայացնում ստեղծագործության գաղափարը, կապը իրականության՝ ժամանակի, հասարակարգերի, քաղաքական, տնտեսական իրավիճակների հետ

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Գնահատումը կատարվում է թեսթերի միջոցով՝ ուսանողին տրվում են.

- գրական ժանրերը, նա նշում է համապատասխան ստեղծագործությունները
- թեմաները, նա նշում է համապատասխան ստեղծագործությունները
- գրական ստեղծագործության հատվածներ, նա նշում է ստեղծագործության վերնագիրը և հեղինակին
- ժանրերի անվանումները, ուսանողը նշում է դրանց առանձնահատկությունները:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում տրված հարցերից առնվազն երկուսին:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՅՍՈՒՐՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է գեղարվեստական գրականության մեծ ընտրանի, մեթոդական ձեռնարկներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 9 ժամ  
Գործնական աշխատանք՝ 18 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Կարողանալ ներկայացնել և փաստարկել գրական ստեղծագործությունների արժանիքները և թերությունները:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում գրական ստեղծագործության հատկանիշները և կարողանում է գնահատել դրանք,
- բ. ճիշտ է ներկայացնում գրական ստեղծագործության կառուցվածքը, բովանդակությունը, սյուժեն, դրանց կապը,

- գ. կարողանում է գնահատել ստեղծագործության լեզուն, հեղինակի գրելաոճը,
- դ. գիտի պատկերավորման միջոցները, ըստ դրանց կարողանում է մեկնաբանել և գնահատել ստեղծագործությունը,
- ե. ճիշտ է ներկայացնում գրական ժանրերի առնձնահատկությունները և կարողանում է գնահատել դրանք,
- զ. կարողանում է կերպար, կերպարի զարգացում ներկայացնել, կերպարներ վերլուծել:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողը ակտիվորեն մասնակցում է համակուրսեցիների կազմակերպած գրական քննարկումներին: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը մասնակցի ընկերների կազմակերպած քննարկումների առնվազն 70%-ին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան տեսական գրականություն, հայ և համաշխարհային գրականության դասական նմուշներ:

**ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք` 9 ժամ
- Գործնական աշխատանք` 18 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կարողանալ գրական երկի քննարկում կազմակերպել` գործածելով տարբեր մեթոդներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է քննարկաման համար ընտրել դասական բարձրաժեք ստեղծագործություններ,
- բ. կարողանում է քննարկաման միջոցով բացահայտել, հասկանալի դարձնել հեղինակի ասելիքը` ստեղծագործության գաղափարը,
- գ. կարողանում է քննարկման միջոցով տարբեր մոտեցումներ, կարծիքներ բացահայտել,
- դ. կարողանում է գրական վերլուծությունը կազմակերպել այնպես, որ արժևորվի ստեղծագործությունն իր արտահայտման ձևի մեջ

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Գնահատումը կատարվում է գործնական աշխատանքի հիման վրա: Ուսուցման ընթացքում ուսանողին հանձնարարվում է կուրսում իր ընտրությամբ 2 ստեղծագործության քննարկում կազմակերպել` նախապես ներկայացնելով տվյալ ստեղծագործությանը վերաբերող քննարկվող խնդիրները, թեմաները և քննարկման կարգը և մոտավոր ընթացքը: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կազմակերպում է 2 քննարկում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցման համար անհրաժեշտ են համապատասխան տեսական գրականություն, հայ և համաշխարհային գրականության դասական նմուշներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 9 ժամ  
Գործնական աշխատանք՝ 18 ժամ:

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԹԱՏՐՈՆ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝** ՆԿԴ 04-09-10

### **ՆՊԱՏԱԿԸ՝**

Ընդլայնել ուսանողների մտահորիզոնը, զարգացնել գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, խոսքի կուլտուրան, ձևավորել և մշակել նախադպրոցական հաստատությունում թատրոնի տարբեր դրսևորումների կիրառման, կերպավորման - կերպարանափոխման հմտություններ: Նախադպրոցական հաստատությունում թատրոնը որպես երեխայի բազմակողմանի զարգացման, կրթման միջոց օգտագործելու կարողության ձևավորում և զարգացում:

### **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ**

Տեսական պարապմունք՝ 11 ժամ  
Գործնական պարապմունք՝ 43 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ**

Ուսանողները նախապես պետք է յուրացրած լինեն «Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանահյուսություն» և «խոսքի զարգացում» մոդուլները:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Կարողանալ հստակ ձևակերպել նախադպրոցական հաստատություններում մանկան թատրոնի նպատակն ու խնդիրները
2. Իմանալ թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններն ու դրանց դրսևորման ձևերը
3. Իմանալ երեխայի գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ
4. Կարողանալ սցենարներ գրել և բեմադրել:
5. Կարողանալ էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրել, խաղալ դրանցում (կերպավորել, կերպարանափոխվել):

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

## **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Կարողանալ հստակ ձևակերպել նախադպրոցական հաստատություններում մանկան թատրոնի նպատակն ու խնդիրները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. գիտի նախադպրոցական հաստատություններում մանկան թատրոնի նպատակն ու խնդիրները,

բ. ճիշտ է ներկայացնում երեխաների «թատերական գործունեության» արդյունքում լուծվող մանկավարժական, հոգեբանական, իմացական խնդիրները:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Ուսանողը 1-2 համակարգչային էջի սահմաններում գրավոր աշխատանք է ներկայացնում, որում ձևակերպում է թատրոնի խնդիրները նախակրթարանում: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է նշված աշխատանքը:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է նախակրթարանի ծրագիր՝ թատրոնին վերաբերող բաժնով կամ տեսական այլ գրականություն:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ թատերական խաղերի և ներկայացումների առանձնահատկություններն ու դրանց դրսևորման ձևերը:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ճիշտ է ներկայացնում թատերական խաղերի, ներկայացումների տեսակներն ու ժանրերը դրանց տարբերություններն ու նմանությունները,

բ. կարողանում է գրական և բանահյուսական ստեղծագործություններով շարժուն խաղեր հորինել՝ հաշվի առնելով զարգացնող, շարժուն և խաղարկային խաղերի առանձնահատկությունները,

գ. կարողանում է ներկայացնել երեխայի գործունեության մյուս ձևերի (կերպարվեստ, երգ-պար, մարմնակրթություն, տեխնոլոգիա...) ինտեգրումը թատերական տարբեր ներկայացումներ և խաղեր կազմակերպելիս:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով:

Ուսուցման ընթացքում ուսանողը կազմում է տարբեր խաղերի միջոցով գրական ստեղծագործություններ ուսուցանելու նախագծեր, դրանք իրականացնում է կուրսում և մասնագիտական պրակտիկայի ընթացքում:



Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը իրականացնում է 3 նախագիծ՝ մեկ հեքիաթ, մեկ բանաստեղծություն և այլ ժանրի մեկ ստեղծագործություն:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան տեսական գրականություն, հայ և համաշխարհային գրականության դասական նմուշներ:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝	3 ժամ
Գործնական աշխատանք՝	17 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ երեխայի գործունեությունը թատերականացնելու հնարքներ և դրանք իրականացնելու մեթոդներ:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. գիտի երեխաների թատերական գործունեությունը կազմակերպելու տարբեր մեթոդներ և հնարքներ, բ. կարողանում է թատերական միջոցներով՝ էտյուդ, խաղ, ներկայացումներ, մնջախաղ, կրթական, սոցիալական, հոգեբանական տարբեր խնդիրներ լուծել

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Համակուրսեցիների հետ փոքրիկ էտյուդներ է բեմադրում՝ ներկայացնելով իրենց կենցաղը, առօրյան, տարբեր այլ իրավիճակներ: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ակտիվորեն է մասնակցում նման էտյուդների իրականացմանը:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Գործնական աշխատանքներ, ներկայացումներ  
Դասավանդման համար անհրաժեշտ են մասնագիտական և տեղեկատու գրականություն:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝	1 ժամ
Գործնական աշխատանք՝	7 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 4**

Կարողանալ սցենարներ գրել և բեմադրել:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. ծանոթ `սցենար գրելու տեխնիկային,  
բ. կարողանում է ցանկացած գրական կամ բանահյուսական նյութ վերածել սցենարի,  
գ. սցենար գրելիս կարողանում է ստեղծագործական տարբեր հնարքներ կիրառել,

- դ. կարողանում է փոքր ծավալի նյութը (առած-ասացվածք, առակ, երգ, հանելուկ...) դարձնել խաղարկային,
- ե. կարողանում է տարբեր ծեսերի, միջոցառումների (նաև՝ սպորտային), խաղերի, տոնակատարությունների սցենարներ գրել:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով: Ուսումնառության ընթացքում ուսանողը համակուրսեցիների հետ իրականացնում է մեկ ներկայացում, մեկ տիկնիկային ներկայացում և առավել տարածված ազգային ծեսեր՝ «Ձատիկ», «Ծառզարդար», «Համբարձում»:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է 1 ծեսի և 1 ներկայացման ծրագիր, համակուրսեցիների հետ իրականացնում է դրանք, մասնակցում է համակուրսեցիների կազմակերպած ծեսերին և ներկայացումներին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, ազգագրական գրականություն, տարբեր նյութեր՝ ձևավորումների համար, ձայնագրություններ, տեխնիկական միջոցներ՝ ձայնարկիչ, ֆոտոխցիկ, պրոյեկտոր և այլն:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 5 ժամ
- Գործնական աշխատանք՝ 17 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ էտյուդներ, խաղարկային իրավիճակներ բեմադրել, խաղալ դրանցում (կերպավորել, կերպարանափոխվել):

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանալ բեմադրել իր ստեղծած կամ այլ սցենարներ,
- բ. կարողանում է տարբեր իրավիճակների վերաբերյալ էտյուդներ ստեղծել և խաղալ կա՛մ համակուրսեցիների, կա՛մ նախադպրոցականների հետ,
- գ. կարողանում է կերպավորել ցանկացած առարկա, երևույթ:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Գնահատումը կատարվում է գործնական աշխատանքի հիման վրա: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը մասնակցում է ուսուցման ընթացքում բեմադրվող էտյուդներին, թատերական խաղերին, ինքն է խաղեր և էտյուդներ բեմադրում:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են խաղերի, ուսանողների կազմած մանկական և թատերական խաղերի հավաքամիներ:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Էտյուդներ և խաղեր իրականացվում են մոդուլի ուսուցման ողջ ընթացքում:

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝** ՆԿԴ 04-09-12

### **ՆՊԱՏԱԿԸ՝**

Մոդուլը մշակվել է ուսանողներին իրական առարկաների տարածական հատկությունների մասին պատկերացումների զարգացման, այդ պատկերացումների ընդհանրացման և վերացարկման միջոցներով, մաթեմատիկական հասկացություններին անցնելու, շոշափելով ճանաչելու, իրական կյանքում իրական գործունեությամբ գիտելիք ձեռք բերելու մեթոդներին ծանոթացնելու, երեխաների հետ աշխատելիս այդ մեթոդները կիրառելու հմտություններ ձևավորելու նպատակով:

**ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ**

Դասախոսություն՝ 30 ժամ

Գործնական պարապմունք՝ 42 ժամ

### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ**

Մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ պետք չէ:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Ճիշտ ներկայացնել այն մեթոդները, որոնք կնպաստեն երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը իրական գործունեության արդյունքում
2. Իմանալ մաթեմատիկական այն հասկացությունները, որոնք ձևավորվում են նախադպրոցական տարիքում:
3. Իմանալ մեթոդներ, հնարքներ, եղանակներ, որոնք ուղղված են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը և կիրառել դրանք
4. Կարողանալ վերլուծել, զարգացնել, կիրառել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը ուղղված մեթոդները
5. Կարողանալ երեխաների գործունեության բոլոր ձևերի ընթացքում նպաստել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ու զարգացմանը
6. Իմանալ, նաև հորինել խաղեր, որոնք ուղղված են մաթեմատիկական մտածողության զարգացմանը

### **ԳՆԱՋԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Ճիշտ ներկայացնել այն մեթոդները, որոնք կնպաստեն երեխաների մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանը իրական գործունեության արդյունքում:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է նկարագրել երեխայի զարգացման միջավայրը, որտեղ կարելի է (ինքնաբուխ կամ ծրագրված) իրականացնել նրա մաթեմատիկական պատկերացումների, մտածողության ձևավորումը՝ լսելով, շոշափելով, զգալով, տեսնելով, փորձից ստացած ինֆորմացիան վերլուծելով և նոր փորձի վերածելով,
- բ. կարողանում է ներկայացնել մեթոդներ, որոնց կիրառմամբ ուսուցումը կկապվի իրականության, առօրյա խնդիրների, կենցաղի հետ՝ հաշվի առնելով երեխաների ընկալունակությունը, կենսափորձը, իմացական աստիճանը (իրական կրթություն իրական կյանքով),
- գ. կարողանում է ներկայացնել առօրյա գործերի և խաղերի ընթացքում մաթեմատիկայի հետ առնչվող պահերը նպատակային օգտագործելու փոքր ծրագրեր,
- դ. կարողանում է շրջապատում եղած ամեն ինչ (մրգեր, բանջարեղեն, մթերք, խաղալիքներ, գործիքներ, թղթեր, վրձիմներ...) օգտագործել համրելու, չափելու-համեմատելու, դասավորելու-շարելու, տեղափոխելու նպատակներով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների), ներկայացման (պրեզենտացիաների) միջոցով: Ուսումնառության ընթացքում ուսանողը խնդիրների փոքրիկ ժողովածու է կազմում, որում հավաքում է երեխայի գործունեության, իրական կյանքի հետ կապված խնդիրներ(ընտանիքի անդամներ, այլ հարազատներ, բնակարան, բնակարանի իրեր, դասասենյակ, դասասենյակի իրեր, ծառատունկ, խոհանոցային գործունեություն, գրեմական պիտույքներ և այլն) , մաթեմատիկական պատկերացումների ձևավորման նախագծեր է ներկայացնում: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում ներկայացնում է մաթեմատիկական հասկացությունների ձևավորման տարբեր հնարքներ: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կատարում է տրված առաջադրանքների մառնվազն 80%-ը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են մասնագիտական գրականություն, տարբեր նյութեր՝ հաշվելու, համեմատելու, ավելացնելու, պակասեցնելու, չափումներ անելու և այլ նպատակներով, սեղանի և զարգացնող այլ խաղեր:

**ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ մաթեմատիկական այն հասկացությունները, որոնք ձևավորվում են նախադպրոցական տարիքում:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. գիտի նախադպրոցական տարիքում ձևավորվող մաթեմատիկական հասկացությունները՝ (ուշադրության, հիշողության զարգացում, կողմնորոշում, որոշ մեծությունների անկախությունը այլ մեծություններից, առարկաների քանակ, առարկաների քանակների հավասարություն և անհավասարություն, ամբողջ և մաս, համրանք, համեմատություններ, այլն),

բ. կարողանում է մեթոդներ, հնարքներ ներկայացնել, ըստ որոնց երեխայի գործունեության ընթացքում իրականացվում են՝ հատկությունների համեմատում, առարկաների խմբավորում, առարկաների խմբին առարկա ավելացնել-պակասեցնել, չափումների կատարում-համեմատում, տարածության և ժամանակի մասին պատկերացումների ձևավորում, առարկաների չափերի, քանակների համեմատում,

գ. կարողանում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ թվաբանական հասկացությունների ձևավորման աշխատանքային նախագծեր կազմել՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնատկությունները, հետաքրքրությունները և ընկալման հնարավորությունները:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի արդյունքով: Ուսումնառության ընթացքում համացանցից, համապատասխան գրականությունից և այլ աղբյուրներից հանում է համապատասխան հասկացության ձևավորմանն ու ամրապնդմանը վերաբերող խնդիրներ, վարժություններ, խաղեր: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսուցանվող բոլոր հացկացությունների վերաբերյալ ուսանողը ուսումնական նյութեր է ներկայացնում, նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական որևէ հասկացություն ձևավորելու և ամրապնդելու աշխատանքային նախագիծ է ներկայացնում՝ նշելով խնդիրը, դրա լուծման քայլերը, մեթոդներն ու հնարքները և անհրաժեշտ ուսումնական նյութը: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կատարում է տրված առաջադրանքների առնվազն 70%-ը:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Իրականացման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, տարբեր նյութեր՝ հաշվելու, համեմատելու, ավելացնելու, պակասեցնելու, չափումներ անելու և այլ նպատակներով, համացանցին միացված համակարգիչ, զարգացնող խնդիրներ, խաղերի ժողովածուներ, գծապատկերներ, աղյուսակներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 9 ժամ

Գործնական աշխատանք՝ 6 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ մեթոդներ, հնարքներ, եղանակներ, որոնք ուղղված են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը և կիրառել դրանք:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում մաթեմատիկական հմտությունների ձևավորումը, շոշափելով ճանաչելու սկզբունքները,
- բ. կարողանում է ներկայացնել երեխաների մոտ դիտարկելու, հետազոտելու և եզրակացություններ անելով գիտելիք ձեռք բերելու հմտությունների զարգացման մեթոդները,
- գ. գիտի մաթեմատիկական հասկացությունների ուսուցման հաջորդականությունը,
- դ. մաթեմատիկական հասկացությունների ձևավորման համար գործածում է ոչ միայն ձեռքի տակ եղած իրերն ու առարկաները, այլև սաների հետ նորերն է ստեղծում:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստի, գործնական կատարման, հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե թեստը ճիշտ է լրացված նվազագույնը 80%-ով, ըստ կատարման չափանիշների հարցերի պատասխանները ճիշտ են տրված և լիարժեք ներկայացված են մաթեմատիկական գաղափարների ու հմտությունների ձևավորման մեթոդներն ու հմարքները:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, աղյուսակներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կարողանալ վերլուծել, զարգացնել, կիրառել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը ուղղված մեթոդները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. կարողանում է հետազոտել մեթոդը, անհրաժեշտության դեպքում փոփոխել այն,
- բ. կարողանում է վերլուծել մեթոդը, նշել դրա իրականացման եղանակները, ներկայացնել սպասվելիք արդյունքները,
- գ. կարողանում է զարգացնել մեթոդը, պարզեցնել կամ բարդացնել, նոր լուծումներ գտնել

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, և թեստերի միջոցով :

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ըստ կատարման չափանիշների թեստերի պատասխանների առնվազն 80%-ը ճիշտ է տրված:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, աղյուսակներ:

#### **Ուսուցման երկնահավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ երեխաների գործունեության բոլոր ձևերի ընթացքում նպաստել մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ու զարգացմանը

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓՈՒՆԻՇՆԵՐ**

- ա. ներկայացնում է մեթոդներ, որոնք երեխաների գործունեության տարբեր ձևեր իրականացնելիս նպաստում են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանը,
- բ. կարողանում է ստեղծել մաթեմատիկական հասկացություններին վերաբերող գրանցումների ձևաթղթեր,
- գ. կարողանում է գրանցել բոլոր տեսակի դիտարկումներն ու փորձերը և մշակել է այդ ընթացքում:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների) միջոցով:  
Ուսանողը դասախոսին է ներկայացնում նախագիծ, որտեղ ներկայացնում է երեխայի գործունեության որևէ ձևի (բանավոր խոսք, խոհանոցային գործունեություն, բնագիտական գործունեություն) իրականացման ընթացքում մաթեմատիկական հասկացությունների ձևավորման օրինակներ  
Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է մշված նախագիծը ըստ կատարման չափանիշների, համակուրսեցիների հետ իրականացնում է այն:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, գծապատկերներ, աղյուսակներ:

#### **Ուսուցման երկնահավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 6.**

Իմանալ, նաև հորինել խաղեր, որոնք ուղղված են մաթեմատիկական մտածողության զարգացմանը:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓՈՒՆԻՇՆԵՐ**

- ա. գիտի և խաղում է տրամաբանական, զարգացնող խաղեր,

բ. կարող է ստեղծել զարգացնող տարբեր խաղեր:

### **ՓՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման, անհատական կամ խմբային նախագծերի (պրոյեկտների) միջոցով:

Ուսանողը դասախոսին է ներկայացնում նախագիծ, որտեղ ներկայացնում է երեխայի տրամաբանական մտածողությանն ուղղված գործունեության որևէ խաղի նկարագիր, որի իրականացման ընթացքում երեխայի մոտ կարող է ձևավորվել մաթեմատիկական մտածողություն:

Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ուսանողը ներկայացնում է նշված նախագիծը ըստ կատարման չափանիշների, համակուրսեցիների հետ կազմակերպում և իրականացնում է այն:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական և տեղեկատու գրականություն, մանկական խաղերի ժողովածու:

### **ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

### **ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԿԵՐՊԱՐԿԵՍ**

**ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԵԿԴ 04-09-13**

### **ՆՊԱՏԱԿԸ`**

Մոդուլը մշակվել է ուսանողների գեղարվեստական մտածողության և ստեղծագործական երևակայության զարգացման, գեղեզվատական բարձր ճաշակ ձևավորելու, նրանց համաշխարհային և հայ կերպարվեստի պատմությանը, կերպարվեստի տեսակներին և ժանրերին ծանոթացնելու, նկարելու և ծեփելու հմտություններ ձևավորելու նպատակներով:

### **ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 54 ժամ**

Տեսական պարապմունք`	20 ժամ
Գործնական աշխատանք`	34 ժամ

### **ՍՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ`**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Հոգեբանություն» մոդուլը:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մոդուլի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

1. Իմանա կերպարվեստի ժանրերը, տեսակները ու առանձնահատկությունները
2. Իմանա հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական դրվագները,



3. Տիրապետի նկարելու և ծեփելու հմտություններին, նյութերին, տեխնիկային և դրանցով կարողանում է աշխատել:
4. Կարողանալ նկարել ցանկացած գրական և բանահյուսական ստեղծագործություն՝ ընտրելով նկարելու համապատասխան տեխնիկա:
- 5.
6. Կարողանալ երեխայի գեղարվեստական գործունեությունը կիրառել ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու նպատակներով:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ կերպարվեստի ժանրերը, տեսակները ու առանձնահատկությունները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում կերպարվեստի ժանրերը, ժանրային առանձնահատկությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում կերպարվեստի ժանրային առանձնահատկությունների կապը ժամանակի, հասարակարգի, տնտեսության, հասարակական հարաբերությունների հետ:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողը էիտազոտական նյութ է պատրաստում գեղանկարչության որևէ ժանրի վերաբերյալ և ներկայացնում դասախոսին և ընկերներին:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունք և գործնական աշխատանք, այցելություններ տարբեր թանգարաններ և ցուցահանդեսներ: Դասավանդման համար անհրաժեշտ է ունենալ տեսական գրականություն, գեղանկարչական տարբեր ալբոմներ, ՏՀՏ միջոցներ՝ համացանցին միացված համակարգիչ, պրոեկտոր:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- |                     |       |
|---------------------|-------|
| Տեսական պարապմունք՝ | 6 ժամ |
| Գործնական աշխատանք՝ | 7 ժամ |

### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական դրվագները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. ճիշտ է ներկայացնում հայ և համաշխարհային կերպարվեստի պատմության հիմնական շրջանները և յուրաքանչյուր շրջանին բնորոշող ժանրերը և այլ առանձնահատկություններ,
- բ. կարողանում է ներկայացնել յուրաքանչյուր շրջանի ճանաչված արվեստագետներին և նրանց առավելագույն ճանաչված աշխատանքները,

- գ. ճիշտ է ներկայացնում հայ կերպարվեստի պատմության կարևոր դրվագները, կերպարվեստի դրսևորման ձևերը, դրա հանրահայտ ներկայացուցիչներին,
- դ. կարողանում է ներկայացնել բարձրավեստ աշխատանքներ, իր կարծիքը դրանց մասին, պատճառաբանել, պաշտպանել իր կարծիքը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է բանավոր հարցման և թեսթերի միջոցով: Ուսանողին կտրվեն մի շարք հարցեր հայ և համաշխարհային կերպարվեստի պատմությունից: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ, այցելություններ թանգարաններ և ցուցահանդեսներ: Դասավանդման համար անհրաժեշտ են կերպարվեստի պատմությանը վրաբերող ալբոմներ, համակարգիչ, տեսապրոեկտոր, ֆոտոխցիկ, կերպարվեստի պատմության մասին էլեկտրոնային նյութեր:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք` 7 ժամ
- Գործնական աշխատանք` 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Տիրապետել նկարելու և ծեփելու որոշ հմտությունների, տեխնիկայի և տեխնոլոգիայի Տիրապետել նկարելու և ծեփելու հմտություններին, նյութերին, տեխնիկային և աշխատել դրանցով:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է գունատեսության հիմունքները,
- բ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է հեռանկարի հիմունքները,
- գ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է լույս ու ստվերի հիմունքները,
- դ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է ծավալի հիմունքները,
- ե. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է կոմպոզիցիայի հիմունքները,
- զ. գիտի և նկարելու ընթացքում կիրառում է համաչափության հիմունքները,
- է. կարողանում է նկարել տարբեր նյութերով,
- ը. կարողանում է ծեփել տարբեր նյութերով:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքի միջոցով: Ուսուցման ընթացքում ուսանողը մի շարք առաջադրանքներով տարբեր նկարներ է նկարում, կազմում է դրանց հավաքածուն, մասնակցում է տարբեր միջոցառումների ձևավորումների և ուսուցման ավարտին` կուրսային ցուցադրությանը: Արդյունքը համարվում է դրական, եթե ուսանողը կատարում է բոլոր

առաջադրանքները և մասնակցում ուսումնական հաստատությունում կազմակերպվող միջոցառումներին և ցուցադրություններին:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր ներկանյութեր (ջրաներկ, ածուխ, գուաշ, յուղաներկ, պաստել, գունավոր կավիճներ), ծեփելու նյութեր (պլաստիլին, կավ, գիպս), մատիտներ, վրձիմներ, մոլբերտներ, տարբեր իրերի մոլյաժներ, արծանիկներ, կիսանդրիներ, նկարչական թղթեր, կտավ, ստվարաթուղթ:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 7 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կարողանալ նկարել ցանկացած գրական և բանահյուսական ստեղծագործություն՝ ընտրելով նկարելու համապատասխան տեխնիկա:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. կարողանում է նկարել գրական և բանահյուսական ցանկացած մանկական ստեղծագործություն իր հնարավորությունների և պատկերացումների սահմաններում,

բ. կարողանում է գույներով ներկայացնել տարբեր երևույթներ, զգացումներ և զգացմունքներ, հասկացություններ, կերպարներ...

գ. կարողանում է մանկական ստեղծագործությունները, ծեսերը ներկայացնել կերպարվեստի տարբեր ժանրերով կամ տեխնիկայով (կոլաժ, հագուստի դիզայն, ներկայացման ձևավորում, ծիսական և տոնական այլ առարկաների պատրաստում)՝ օգտագործելով զանազան նյութեր, առարկաներ (հատկապես՝ թափոններ),

դ. կարողանում է հեքիաթների էլեկտրոնային տարբերակներ ստեղծել սեփական ձևավորումներով,

ե. կարողանում է ընկերների, մասնագիտական պրակտիկայի ընթացքում նաև երեխաների հետ, տարբեր տեխնիկաներ կիրառելով, խմբային նկարներ նկարել, կոլաժներ պատրաստել:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների, անհատական և խմբային նախագծերի իրականացման միջոցով: Ուսանողը ուսուցման ընթացքում նկարում է բոլոր այն մանկական ստեղծագործությունները, որոնք ուսուցանվում են «Մանկական գրականություն և ժողովրդական բանահյուսություն» առարկայից, կազմում է այդ աշխատանքների հավաքածուն, մասնակցում է կուրսում կազմակերպվող ծեսերի, ներկայացումների և այլ միջոցառումների ձևավորումներին: Ուսուցման ավարտին կազմակերպվում է ուսուցման ընթացքում ստեղծված նյութերի ընդհանուր ցուցահանդես: Արդյունքը կհամարվի դրական, եթե ուսանողը կներկայացնի ուսուցման ընթացքում իր ստեղծած գործերի փաթեթը և կմասնակցի կուրսային ցուցահանդեսին:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են նկարելու և ծեփելու միջոցներ, այցելություններ թանգարաններ և ցուցահանդեսներ, տիկնիկային և այլ ներկայացումներ:

### **Ուսուցման երևչեակավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 5 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ երեխայի գեղարվեստական գործունեությունը կիրառել ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու նպատակներով:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

ա. կարողանում է տառաճանաչման նպատակով տառերի նկարային կերպարներ ստեղծել՝ կերպավորել տառերը,

բ. կարողանում է նկարային առաջադրանքներ ստեղծել թվաբանական տարբեր հասկացություններով աշխատելու համար՝ հաշիվ, համեմատում, հավասարություն և այլն,

գ. կարողանում է առաջադրանքներ ստեղծել, որոնց լուծումը նկարելու հետ է կապված,

դ. կարողանում է էլեկտրոնային բացիկներ և այլ գեղարվեստական նյութեր ստեղծել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների, անհատական և խմբային նախագծերի իրականացման միջոցով:

Ուսանողը ուսուցման ընթացքում որևէ կոնկրետ թեմայով (տառուսուցում, թվաբանություն, բացիկներ և այլն) ստեղծելով նկարային տարբեր առաջադրանքներ, ուսումնական նյութեր, դրանք ներկայացնում է կուրսային կամ թեմատիկ ցուցահանդեսների: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է 2 թեմատիկ աշխատանք և մասնակցում ցուցադրությունների կամ կազմակերպում իր նախագծերի ներկայացումը (պրեզենտացիան):

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ են տեսական գրականություն, նկարելու և ծեփելու միջոցներ, ՏՀՏ միջոցներ:

### **Ուսուցման երևչեակավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 7 ժամ

## ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ԿԵՐՊՈՒՎԵՍՏԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ՆԿԴ 04-09-14

### ՆՊԱՏԱԿԸ

Մոդուլը մշակվել է նկարչություն և ծեփ դասավանդելու մեթոդիկայի վերաբերյալ ուսանողի մոտ տեսական գիտելիքներ ձևավորելու, ձեռք բերած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ ձևավորելու և զարգացնելու նպատակով:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 36 ժամ

Տեսական պարապմունք` 14 ժամ

Գործնական աշխատանք` 22 ժամ

### ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է յուրացրած լինի «Կերպարվեստ» մոդուլը:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Իմանալ երեխայի գեղարվեստական գործունեության խնդիրները
2. Իմանալ տարբեր մեթոդներ, որոնք կիրառելի են գեղարվեստական գործունեության միջոցով ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու համար:
3. Իմանալ մեթոդներ, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնեն երեխայի պատկերավոր մտածողությունը

### ԱՐԴՅՈՒՆՔ 1.

Իմանալ երեխայի գեղարվեստական գործունեության խնդիրները:

### ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. կարողանում է ներկայացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը զարգացնող մեթոդներ և հնարքներ
- բ. կարողանում է ներկայացնել երեխաների տեսողական հիշողությունը, տարածական մտածողությունը զարգացնող մեթոդներ, հնարքներ, խաղեր,
- գ. կարողանում է ներկայացնել երեխաների մոտ իրականության երևույթների ու առարկաների նկատմամբ վերաբերմունք մշակելու մեթոդներ և աշխատանքներ:

### ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով:

Ուսանողը ներկայացնում է նախադպրոցականին ուղղված նկարչական տարբեր առաջադրանքների շարք: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է դասախոսի առաջարկած խնդիրներին վերաբերող առնվազն 2 առաջադրանքների շարք և դրանց կատարման արդյունքները:

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, նախադպրոցական կրթության ծրագրեր:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Իմանալ տարբեր մեթոդներ, որոնք կիրառելի են գեղարվեստական գործունեության միջոցով ուսուցողական տարբեր խնդիրներ լուծելու համար:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- ա. գիտի նախադպրոցական տարիքի երեխայի աշխարհաճանաչողության, աշխարհընկալման, իրականության, շրջապատող միջավայրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, նրա տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
- բ. տիրապետում է հնարքների և մեթոդների, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնում են երեխայի ստեղծագործական երևակայությունը,
- գ. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնք երեխաների գործունեության ընթացքում նպաստում են միջառարկայան կապերի իրականացմանը:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի գնահատումն իրականացվում է գործնական աշխատանքի միջոցով:  
Ուսանողին կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք զարգացնում են երեխաների գեղարվեստաստեղծագործական ունակությունները, տեսողական հիշողությունը, տարածական պատկերացումները և ստեղծագործական երևակայությունը:

#### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, համակարգիչ, նախադպրոցականի զարգացման ծրագրեր:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 4 ժամ  
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ մեթոդներ, որոնք կերպարվեստի միջոցով զարգացնեն երեխայի պատկերավոր մտածողությունը

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Ճիշտ է ներկայացնում այն մեթոդները, որոնք զարգացնում են երեխայի պատկերավոր մտածողությունը:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են երեխայի գեղարվեստական գործունեության կազմակերպմանը:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը երեխայի հոգեբանական և տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ կարողանում է ներկայացնել երեխայի գեղարվեստական գործունեությունը խթանող մեթոդների և հնարքների 2 նախագիծ:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, նախադպրոցականի զարգացման ծրագրեր:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

#### **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՁԵՈՒՐՎԵՍ**

**ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝** ՆԿԴ 04-09-15

#### **ՆՊԱՏԱԿԸ**

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կարողանում է աշխատել թղթով, ստվարաթղթով, բնական և արհեստական նյութերով, թափոններով, գործվածքով և այդ հմտությունները կիրառել նախադպրոցական հաստատություններում երեխաների գործունեությունը կազմակերպելիս:

#### **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 72 ժամ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ  
Գործնական աշխատանք՝ 60 ժամ

#### **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝**

Այս մոդուլը մուտքային մակարդակ չի պահանջում:

#### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. Աշխատել թղթով, ստվարաթղթով և այլ նյութերով

2. կատարի պարզագույն գործողություններ գործվածքներով և թելերով
3. Աշխատել գործվածքով, թելերով, բնական և արհեստական նյութերով՝ ազգային տոներն արտացոլող ձեռարվեստի նմուշներ պատրաստելու համար:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Աշխատել թղթով, ստվարաթղթով և այլ նյութերով:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. տիրապետում է ձեռքի գործիքներն ու հարմարանքները օգտագործելու եղանակներին, թուղթը խնայողաբար օգտագործելուն և անվտանգության կանոններին,
- բ. աշխատում է թղթով և պատրաստում է ծալումներով աշխատանքներ,
- գ. գծանշում, չափում, կտրում, հյուսում է թուղթը,
- դ. ճիշտ է տեղադրում և սոսնձում ապլիկացիոն աշխատանքների դետալների հաջորդականությունը,
- ե. մակակտրում է ստվարաթուղթը և ստանում է ծավալային շինվածքներ,
- զ. կարողանում է ձոռքի տակ եղած նյութերով աշխատել,
- է. կարողանում է զանազան թափոններով անհրաժեշտ առարկաներ կամ ուսումնական նյութ պատրաստել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն թուղթ և ստվարաթուղթ, որոնցից նա պետք է կարողանա դրանցից պատրաստված դետալներից գործողությունների որոշակի հաջորդականությամբ հավաքի, ձևավորի կամ պատրաստի խճանկարներ և ապլիկացիա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է պատրաստել խճանկար և ապլիկացիա, պահպանելով կատարման չափանիշներով սահմանված պահանջները և անվտանգության տեխնիկայի կանոնները: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է պատրաստված խճանկարի և ապլիկացիայի միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում թղթից և ստվարաթղթից պատրաստել խճանկարներ և ապլիկացիաներ:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գունավոր թղթեր և ստվարաթուղթ, սոսինձ, մկրատ, կտրող այլ գործիքներ, այլև, համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ:

### **ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- |                     |        |
|---------------------|--------|
| Տեսական պարապմունք՝ | 4 ժամ  |
| Գործնական աշխատանք՝ | 24 ժամ |



## **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Կարողանում է բնական և արհեստական նյութերով և թափոններով մշակել և կոլաժներ, տարբեր կերպարներ պատրաստել,

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. մշակում է բնական և արհեստական նյութերը ստեղծելով նոր իրեր,
- բ. օգտագործում է գործիքները, միացնում է դետալները,
- գ. ձեռքի տակ եղած նյութերը , թափոնները օգտագործում է նպատակային և գտնում է ինքնատիպ լուծումներ,
- դ. պատրաստում է կոլաժ, խճանկար,
- ե. զանազան նյութերով կարողանում է տարբեր չափերի, ոճերի տիկնիկներ պատրաստել մանկական ներկայացումների համար,
- զ. կարողանում է տարբեր նյութերով առօրյա օգտագործման իրեր պատրաստել (աղբաման, ջրաման, ծաղկաման, արկղեր, պայուսակներ...),
- է. կարողանում է ստեղծագործական մոտեցում ցուցաբերել թափոնների նկատմամբ՝ հին իրերը (հովանոց, գլխարկ, պայուսակ, հողաթափեր, զգեստներ, խոհանոցային պարագաներ...) նոր տեսքով և գործածությամբ ներկայացնելով,
- ը. կարողանում է տարբեր նյութերից ուսումնական-դիդակտիկ նյութեր պատրաստել:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսումնառության ընթացքում ուսանողը տարբեր բնական և արհեստական նյութերից՝ հատկապես թափոններից, հստակ առաջադրանքներով կոլաժներ և գեղարվեստական այլ իրեր, ուսումնական տարբեր նյութեր է պատրաստում, մասնակցում է ուսումնական հաստատությունում և մասնագիտական փորձառության ընթացքում կազմակերպվող միջոցառումների ձևավորումներին, մասնակցում է ուսուցման ավարտին կազմակերպված ցուցադրությանը: Արդյունքը կհամարվի յուրացված, եթե ուսանողը կատարում է բոլոր աշխատանքները և մասնակցում ցուցադրությանը, կարողանում է համատեղել բնական և արհեստական նյութեր և իրեր (ծղոտ, մետաղալար, փրփրապլաստ, շշեր, կտորեղեն, կոճակներ և այլն) և դրանցից իրական և ոչ իրական իրեր ու մոդելներ պատրաստել:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Գործնական աշխատանք, ցուցադրություններ, արված աշխատանքների կիրառում: Անհրաժեշտ է ունենալ բնական և արհեստական նյութեր, զանազան թափոններ, աշխատանքային համապատասխան գործիքներ:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 4 ժամ
- Գործնական աշխատանք՝ 16 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Աշխատել գործվածքով, թելերով, բնական և արհեստական նյութերով՝ ազգային տոներն արտացոլող ձեռարվեստի նմուշներ պատրաստելու համար:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. գիտի ծիսական առարկաների պատրաստման տարբեր տեխնոլոգիաներ,
- բ. ընտրում է գործվածք ըստ նշանակության,
- գ. կենցաղային իրերը ձևավորելիս կիրառում է պարզագույն կարատեսակներ,
- դ. թելերից, տարբեր թփոններից պատրաստում է ազգային ծեսերին բնորոշ ձեռարվեստի նմուշներ,
- ե. օգտագործում է լեկալներ, միացնում փափուկ խաղալիքների դետալները, կարողանում է տարբեր տեխնոլոգիաներով տիկնիկներ և այլ խաղալիքներ պատրաստել

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

### **Արդյունքի գնահատումը կկատարվի գործնական աշխատանքի միջոցով:**

Ուսանողն ուսուցման ընթացքում մասնակցում է ուսումնական հաստատությունում իրակացվող միջոցառումների, ծեսերի ձևավորումների՝ տարբեր տեխնոլոգիաներով տիկնիկներ, ծիսական իրեր, խաղեր պատրաստելով, որոնք կներկայացնի ավարտական ցուցադրությանը: Արդյունքը կհամարվի ձեռքբերված, եթե ուսանողը կատարում է բոլոր աշխատանքները և մասնակցում ցուցադրությանը

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Գործնական աշխատանք, կատարված աշխատանքների կիրառում, ցուցադրություններ:

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տարբեր մանրաթելերից՝ բամբակից, բրդից, արհեստական, սինթետիկ մանրաթելեր, պատրաստված գործվածքներ և թելեր, ասեղների, կոճակների, մերակների հավաքածու, կարի մեքենա, կարող այլ գործիքներ, մկրատ, ստվարաթուղթ, համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 4 ժամ
- Գործնական աշխատանք՝ 20 ժամ:

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ՆԿԴ 04-09-16

## **ՆՊԱՏԱԿԸ՝**

Մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը կիմանա նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, երեխաների ֆիզիկական գործունեության ձևերը, միջոցներն ու մեթոդները և այն կկիրառի մասնագիտական գործունեության ընթացքում՝ նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի, օրգանիզմի ամրապնդման և առողջության պահպանման նպատակով:

**ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝** 108 ժամ

Տեսական պարապմունք՝ 46 ժամ

Գործնական աշխատանք՝ 62 ժամ

### **ՍՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ**

Սոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով», «Նախադպրոցական մանկավարժություն» մոդուլները:

### **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. Իմանա նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և միջոցները: Իմանա և հիմնավորելով կիրառի ուսուցման և ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդները՝ դպրոցականի ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս:
2. Բնութագրի և ցուցադրի մարմնամարզական վարժությունների տեսակները /շարունակելի-շարավիժություններ, ընդհանուր ֆիզիկական զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ, խաղեր, սպորտային վարժություններ/:
3. Բնութագրի և ցուցադրի դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները դպրոցում:
4. Բնութագրի և ցուցադրի ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումները և արտադասարանական աշխատանքները դպրոցում:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

#### **Արդյունք 1.**

Իմանալ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները և միջոցները:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. բնութագրում է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական հասկացությունները, խնդիրները (առողջապահական, կրթական, դաստիարակչական) և միջոցները,
- բ. ներկայացնում է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության կապը բազմակողմանի դաստիարակության համակարգի մյուս գործոնների (մտավոր, աշխատանքային, գեղագիտական և բարոյական) հետ,
- գ. գիտի նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հիմնական և օժանդակ միջոցները, ներկայացնում է երեխայի օրգանիզմի վրա նրանց ներգործության ուղիները,
- դ. ներկայացնում է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ֆիզիկական որակների (ճարպկություն, ճկունություն, դիմացկունություն, արագաշարժություն և ուժ) ձևավորման ուղիները,

ե. կարողանում է մշակել տարբեր որակների ձևավորման համար անհրաժեշտ վարժությունների համալիրներ:

### **ՉԱՐՅԱՏԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողը ներկայացնում է նախադպրոցականին ուղղված ֆիզիկական վարժությունների, խաղերի շարք՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, ֆիզիկական պահանջները: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է դասախոսի առաջարկած խնդիրներին վերաբերող առաջադրանքներ՝ մեկնաբանելով դրանց կապը նախադպրոցականի ֆիզիկական, մտավոր, բարոյական զարգացման հետ: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը ներկայացնում է առնվազն 10 մարզական խաղ և ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կամ բանավոր կամ գրավոր հարցերի առնվազն 80%-ին:

### **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական պարապմունքներ և գործնական աշխատանք: Դասավանդման համար անհրաժեշտ է տեսական գրականություն, տարբեր խաղերի ժողովածուներ, համացանցի առկայություն, մարզադահլիճ:

### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

### **Արդյունք 2.**

Իմանալ և ցուցադրել նախադպրոցական տարիքի երեխաների օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները նախադպրոցական հաստատություններում

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական զարգացման առանձնահատկություններն ու չափորոշիչները,
- բ. ճիշտ է ներկայացնում նախադպրոցականի ֆիզիկական աճի դիտարկումների և չափագրումների մեթոդները,
- գ. կարողանում է երեխայի ֆիզիկական աճի, զարգացման հսկման և չափագրման, գրանցման սանդղակ (ձևաթղթեր կամ էլեկտրոնային աղյուսակներ) ստեղծել,
- դ. կարողանում է ներկայացնել այն միջավայրը, որն ապահովում է նախադպրոցականի ֆիզիկական գործունեությունը ողջ օրը և ցանկացած պահի,
- ե. բնութագրում է նախադպրոցական տարիքի երեխաների օրգանիզմի կոփման միջոցները (օդային, արևային, ջրային),
- զ. ըստ առաջադրանքի կազմում է կոփման միջոցառումների գրաֆիկ տարբեր տարիքի երեխաների համար,
- է. ներկայացնում է երեխայի ճիշտ կեցվածքի և կեցվածքի շեղումների արտաքին բնորոշ գծերը,

ը. տիրապետում է երեխայի մոտ կեցվածքի շեղման և հարթաթաթոթայան հայտնաբերման ձևերին և կարողանում է կազմել դրանց կանխման համար հատուկ վարժությունների համալիր:

### **ՉԼԱՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի ստուգումն իրականացվելու է բանավոր հարցման կան թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելու ընթացքում ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր մեթոդների վերաբերյալ: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է պատասխանում թեստերի կան բանավոր կան գրավոր հարցերի առնվազն 90%-ին կան ճիշտ է ցուցադրում վարժությունների անմիջական ցուցադրման եղանակներն ըստ կատարման չափանիշների:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### **ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 12 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

### **Արդյունք 3.**

Իմանալ և ցուցադրել ֆիզիկական վարժությունների տեսակները և և դրանց կիրառման մեթոդները երեխայի գործունեության ընթացքում

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. դասակարգում է ֆիզիկական վարժությունները ըստ ենթաբաժինների,

բ. ներկայացնում և ցուցադրում է ֆիզիկական վարժությունների կատարման տեխնիկան,

գ. ներկայացնում և ցուցադրում է ֆիզիկական շարժումների ուսուցման էտապները (նախնական ուսուցում, խորացված ուսուցում, ամրապնդում և կատարելագործում),

դ. ներկայացնում և գործնականորեն կիրառում է ֆիզիկական վարժությունների ուսուցման խոսքային և գործնական մեթոդների տեսակները,

ե. բնութագրում է մարմնամարզական վարժությունների տեսակները՝ շարունակներ - շարափոխումներ, ընդհանուր զարգացմանը նպաստող վարժություններ, հիմնական շարժումներ, պարային շարժումներ,

զ. ըստ առաջադրանքի ցուցադրում է դարձումների տեսակները, խտացման և բացազատման ձևերը,

է. բացատրում և ցուցադրում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների և ելման դրությունների տեսակները,

ը. կազմում է ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների համալիր՝ պահպանելով ճիշտ գրառման կանոնները,

թ. ներկայացնում և ցուցադրում է նախադպրոցական տարիքում ուսուցանվող հիմնական շարժումների տեսակները (քայլք վազք, ցատկ, մագլցում, սողանցում, հավասարակշռություն, գլորում, նետում, բռնում):

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Արդյունքի ստուգումն իրականացվելու է գործնական աշխատանքի իրականացման միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն կատարել առաջադրանքներ և կազմակերպել շարժախաղեր ու մարզախաղեր ըստ կատարման չափանիշների:

Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից խաղաքարտի հիման վրա որևէ բնույթի շարժախաղի մշակման, կազմակերպման ու ներկայացման միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է ցուցադրում կամ կատարում բոլոր գործողությունները:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

Գործնական աշխատանք՝ 16 ժամ

### **Արդյունք 4.**

Իմանալ և ցուցադրել շարժախաղերի, մարզախաղերի և սպորտային վարժությունների ուսուցման մեթոդիկան նախադպրոցական հաստատություններում:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. ներկայացնում և ցուցադրում է նախադպրոցական տարիքի երեխաների շարժախաղերի տեսակները ըստ բովանդակության և ըստ շարժողականության,

բ. ճիշտ է ներկայացնում շարժախաղերի կազմակերպմանը առաջադրվող մանկավարժական պահանջները,

գ. ճիշտ է ներկայացնում և ցուցադրում նախադպրոցական տարիքի համար նախատեսվող մարզախաղերի տեսակները և դրանց տարրերի ուսուցման մեթոդները,

դ. ըստ առաջադրանքի կազմում է խաղաքարտ տարբեր շարժախաղերի համար,

ե. ճիշտ է ներկայացնում և ցուցադրում է սպորտային վարժությունների ընդհանուր բնութագիրը և դրանց տարրերի ուսուցման մեթոդիկան,

զ. գիտի ազգային մանկական խաղեր և դրանց իրականացման մեթոդները:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի գործնականորեն ցուցադրել կրտսեր դպրոցականի օրգանիզմի կոփման և կեցվածքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները նախակրթարանում:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը գիտի դպրոցականի անձնական հիգիենային ներկայացվող պահանջները, օրգանիզմի կոփման միջոցները և նրանց ներկայացվող հիգիենիկ կանոնները, ճիշտ է կազմում կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիրը: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից դպրոցականի կեցվածքի շեղման պատճառների իմացության և դպրոցականի բնականոն կեցվածքի ձևավորմանը նպաստող ֆիզիկական վարժությունների համալիր մշակելու միջոցով: Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողն ըստ կատարման չափանիշների ճիշտ է ցուցադրում կամ կատարում բոլոր գործողությունները:

## **ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 10 ժամ

Գործնական աշխատանք՝ 12 ժամ

## **Արդյունք 5.**

Ներկայացնել ֆիզիկական դաստիարակության աշխատանքի ձևերը նախադպրոցական հաստատություններում:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. ներկայացնում է նախավարժանքի կառուցվածքը, նշանակությունը և անցկացման մեթոդիկան,
- բ. ըստ առաջադրանքի կարողանում է կազմել նախավարժանքի համալիր տարբեր տարիքի երեխաների համար՝ պահպանելով վարժությունների ընտրությանը ներկայացվող մանակավարժական պահանջները,
- գ. կարողանում է բնութագրել և ցուցադրել երեխաների ֆիզիկական գործունեության տեսակները և իրականացման մեթոդիկան,
- դ. կարողանում է հիմնավորել ֆիզիկական գործունեության տարբեր մասերի համար ընտրված նյութերի նպատակայնությունը,
- ե. ճիշտ է կատարում ֆիզիկական գործունեության նախապատրաստական քայլերի հերթականությունը,
- զ. գիտի և ցուցադրում է նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվ հանգստի կազմակերպման ուղղությամբ տարվող աշխատանքների ձևերը մանկապարտեզում,
- է. կարողանում է կազմել մարզական տոնի, ժամանցի սցենար և հեռավոր զբոսանքի ծրագիր՝ կատարելով երթուղու քարտեզագրում:

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի գործնականորեն ցուցադրել նախադպրոցականի ֆիզկուլտ-առողջարարական միջոցառումների աշխատանքների կազմակերպումը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցուցադրում է առավոտյան նախավարժանքի, ֆիզկուլտ-դադարի կառուցվածքը, ճիշտ է կատարում մարզական տոնի և ժամանցների նախապատրաստական աշխատանքներ, կազմում է սցենարներ, նախադպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակ, ճիշտ է մշակում զբոսաշրջային արշավի ծրագիր: Արդյունքի յուրացման գնահատումը կատարվում է ուսանողի կողմից արտադասարանական աշխատանքների, մարզական տոնի և ժամանցների սցենարների մշակման, դպրոցականների յուրացրած շարժողական հատկությունների, հմտությունների և ունակությունների գնահատման սանդղակի կազմելու միջոցով:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Տեսական և գործնական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, երաժշտավորություններ, մասնագիտական գրականություն, սահմանված կարգով կահավորված մարզադահլիճ, անհրաժեշտության դեպքում՝ տեսաֆիլմեր:

## **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ  
Գործնական աշխատանք՝ 18 ժամ

## **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԵՐԳ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԵԿԴ - 4-09-13

## **ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ**

Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներդաշնակ հոգևոր զարգացում, երաժշտական ունակությունների, երաժշտական լսողության, երաժշտական մտածողության զարգացում, ազգային երաժշտական մշակույթի յուրացում, երաժշտության ունկնդրման, երաժշտական ստեղծագործությունների ընկալման, վերլուծության և գնահատման ունակությունների ձևավորում:

## **ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 108 ժամ**

Տեսական պարապմունք՝ 35 ժամ  
Գործնական աշխատանք՝ 73 ժամ

## **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ՝**

Այս մոդուլը ուսումնասիրելու համար մուտքային մակարդակ չի պահանջվում:

## **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է

1. իմանա երեխաների համար ստեղծված հայ ազգային երաժշտարվեստի նմուշները,
2. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները
3. իմանա երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ,
4. կարողանա կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր.



5. կարողանա մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով՝ նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի մոտիվները, որոնք ստեղծված են երեխաների համար կամ հասկանալի, հասանելի են նրանց:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. գիտի երեխաների համար ստեղծված ազգային և կոմպոզիտորական բարձրարվեստ երաժշտական ստեղծագործությունները, որոնք նախատեսված են 2-10 տարեկանների համար,

բ. ճիշտ է ներկայացնում հայ ժողովրդական բանահյուսական մոտիվների միջոցով (խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր) երեխաների ռիթմի զարգացողությունը, երաժշտական ընկալունակությունը զարգացնող մեթոդներն և հնարքները:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր երեխաների համար նախատեսված հայ ազգային և հոգևոր երաժշտարվեստի մոտիվների մասին, կհանձնարարվի ցուցադրել մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են երեխաների ռիթմի զարգացվածությունը և երաժշտական ընկալունակություն բարձրացնելուն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին և երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ կարողանում է ներկայացնել խաղիկներ, հաշվերգեր, խաղերգեր:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է առաջարկված 5 երաժշտական հատվածներից գուշակել 4-ը, ներկայացնում է հայ ժողովրդական բանահյուսության առնվազն 3 մոտիվ, որոնք նպատակաուղղված են երեխաների ռիթմի զարգացվածությունը և երաժշտական ընկալունակություն բարձրացնելուն:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 7 ժամ

Գործնական աշխատանք՝ 15 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. գիտի համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունները և դրանց հեղինակներին,
- բ. գիտի դասական երաժշտության ունկնդրման կազմակերպման հնարքներ,
- գ. կարողանում է կազմակերպել դասական երաժշտության ունկնդրում՝ ելնելով երեխաների տարիքային առանձնահատկություններից:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կտրվեն հարցեր համաշխարհային երաժշտարվեստի առավել հայտնի ստեղծագործությունների մասին:

Արդյունքի համարվում յուրացված, եթե ուսանողը կարողանում է երաժշտական ստեղծագործությունների հատվածների հիման վրա գուշակել այդ ստեղծագործության անվանումը և հեղինակին և երեխաների տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ ընտրում է համապատասխան երաժշտական գործեր:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիսոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

**ՈՒՍՈՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 8 ժամ
- Գործնական աշխատանք՝ 14 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Իմանալ երգի ուսուցման տարբեր մեթոդներ և հնարքներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. գիտի տարբեր թեմատիկ երգերի ուսուցման և կատարման առանձնահատկությունները,
- բ. կարողանում է երգ-երաժշտությունը համատեղել երեխաների գործունեության բոլոր ձևերի հետ,
- գ. ճիշտ է կազմակերպում երգի ուսուցումը՝ նպաստելով երեխաների ստեղծագործական ունակությունների, երևակայության, երաժշտական մտածողության զարգացմանը,
- դ. կարողանում է պարերգի ուսուցումը վերածել ներկայացման,
- ե. կարողանում է երաժշտությունը գույներով արտահայտել,
- զ. կարողանում է մեկնաբանել լսած երաժշտությունը, ներկայացնել իր զգացողությունները:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի կազմակերպել երգի և պարերգի ուսուցման խաղ-ներկայացման նախագիծ, գույներով «երգը նկարել» և խոսքերով արտահայտել որևէ երաժշտության մասին իր զգացողությունները:

Արդյունքը համարվում է յուրացված, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա ինքնուրույն մշակել առնվազն ազգային 5 մանկական երգի ուսուցման

խաղ-ներկայացման նախագիծ՝ դրանց կցելով այդ երգերի մասին գունային և խոսքային սեփական պատկերացումները:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ բարձրարժեք մանկական երգերի ժողովածու, ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, գունավոր մատիտներ կամ ջրաներկ, նկարչական թղթեր, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 8 ժամ

Գործնական աշխատանք՝ 14 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կազմակերպել տարբեր երաժշտական խաղեր, վարժանքներ:

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

ա. գիտի երաժշտական խաղերի առանձնահատկությունները և խնդիրները,

բ. կարողանում է երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր կազմակերպել,

գ. կարողանում է երաժշտական տարբեր վարժությունների միջոցով զարգացնել երեխաների ռիթմի զգացողությունը,

դ. երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով կարողանում է ռիթմիկ ձայներ ստանալ:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի մշակել և կազմակերպել երաժշտական որոշակի խնդիրներով խաղեր, ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով, շրխկաններ պատրաստել:

Արդյունքը համրվում է յուրացված, եթե ուսանողը ինքնուրույն հորինում է առնվազն 3 երգ-խաղ և ցուցադրել, ստանալ ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ ցուցադրել իր կողմից հորինված երաժշտական խաղը և ստանում է ռիթմիկ ձայներ երաժշտական և ձեռքի տակ եղած հնչող տարբեր գործիքներով և առարկաներով:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, երաժշտական որոշ գործիքներ (դիոլ, դափ, կիթառ, այլն), մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ:

#### **ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Իմանալ մայրենի լեզվի, խոսքի մշակման ճանապարհով (ճիշտ խոսելաձև, տրամաբանական շեշտ, հնչյունների ճիշտ արտասանություն) խոսքը ասերգի վերածելով նպաստել սովորողի մեղեդային մտածողության զարգացմանը:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. գիտի մեթոդներ և հնարքներ, որոնց կիրառմամբ խոսքը դառնում են ավելի երաժշտական, վերածվում ասերգի կամ երգի,
- բ. գիտի մայրենի լեզվի ճիշտ խոսելաձևն ու արտասանական առանձնահատկությունները,
- գ. երեխաների երաժշտական և խոսքային գործունեությունը կազմակերպելիս կարողանում է ճիշտ կիրառել արտասանական առանձնահատկությունը,
- դ. ճիշտ է կազմակերպում երգ-երաժշտության ունկնդրումը, նպաստելով երեխայի լսելու, տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ընտրել առանձին ստեղծագործություններ, որոնք հնարավոր կլինի հետագայում վերածել ասերգերի և օգտագործել դրանք երեխաների երաժշտական և խոսքային գործունեության կազմակերպման, նպաստելով երեխայի լսելու տեսնելու, խորհելու ունակությունների զարգացմանը:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է դասախոսի հանձնարարականի հիման վրա իր կողմից ընտրված ստեղծագործությունները վերածել ասերգերի և ներկայացնել դրանք կատարման չափանիշներին համաձայն: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է հաջողությամբ կատարել իր կողմից հորինված առնվազն 2 ասերգ:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ, բարձրախոս, ձայնի ուժեղացուցիչներ, երաժշտական որոշ գործիքներ:

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

- Տեսական պարապմունք՝ 6 ժամ
- Գործնական աշխատանք՝ 12 ժամ

**ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ` ՊԱՐ ԵՎ ՌԻԹՄԻԿԱ**

**ՍՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ` ԴՏԴ 04-09-027**

**ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`**

Այս մոդուլի նպատակն է սովորողին ծանոթացնել տարրական դպրոցում պարի ուսուցման նպատակներին և առնձնահատկություններին, սովորեցնել ազգային պարեր, զարգացնել նրանց երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը, գեղարվեստական մտածողությունը, մարմնին տիրապետելու մշակույթ ձևավորել:

**ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 36 ժամ**

Տեսական պարապմունք` 7 ժամ

Գործնական աշխատանք` 29 ժամ

**ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ`**

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ պետք է ուսումնասիրի «Երգ,երաժշտություն և դասավանդման մեթոդիկա» մոդուլը:

**ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա պարային հիմնական շարժումները,
2. կարողանա խմբի հետ պարել հայկական ավանդական պարերի որոշ տեսակներ,
3. տիրապետի պարի ուսուցման տարբեր մեթոդների և հնարքների,
4. կարողանա պարի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը,
5. կարողանա մանկական տարբեր ոճերի պարեր բեմադրել` կիրառելով պարը որպես մտածողության, հուզականային որակների արտահայտման միջոց:

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ**

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1.**

Իմանալ պարային հիմնական դիրքերն ու շարժումները, հայ ավանդական պարարվեստի նմուշներ:

**ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`**

Ուսանողը

1. գիտի պարային հիմնական դիրքերն ու շարժումները
2. տիրապետում է ազգային պարին բնորոշ շարժումներին, պարային դիրքերին
3. կարողանում է երգին կամ երաժշտությանը համապատասխան պար բեմադրել

4. գիտի մի շարք ազգային պարեր, մանկական խաղ-պարեր
5. Ճիշտ է կարողանում տարբեր պարեր և պարային շարժումներ օգտագործել երեխայի գործունեությունը կազմակերպելիս (մարմնամարզություն, ծիսական բեմականացում, երաժշտական և շարժուն խաղերի կազմակերպում, թատրոն, մնջախաղ):
6. կարողանում է ճիշտ պահպանել պարային կեցվածքը, մարմնի տարբեր մասերի շարժումների զուգորդումը:
7. Ծանոթ է ազգային ծեսերին և դրանց հատուկ պարերին, բեմականացվող խաղերին:

## **ԳԼԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ցուցադրել ազգային որոշ պարային շարժումներ՝ համաձայն կատարման չափանիշների:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 ազգային պարի հիմնական շարժումները:

## **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

## **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 4 ժամ

## **ԱՐԴՅՈՒՆՔ 2.**

Կարողանա խմբի հետ պարել հայ ավանդական պարարվեստի նմուշներ:

## **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Գիտի ազգային ավանդական պարերի հիմնական դիրքերն ու շարժումները:
2. Կարողանում է ազգային պարին հատուկ շարժումներով պարեր, պար-ներկայացումներ բեմադրել:
3. Կարողանում է խմբի հետ պարել առավել տարածված պարերը:

## **ԳԼԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի մյուս ուսանողների հետ միասին բեմադրել որևէ ազգային ավանդական պար և ներկայացնել այն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է մյուս ուսանողների հետ միասին բեմադրած պարին մասնակցել:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է մասնակցել առնվազն 1 պարի:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:

### **Ուսուցման երևչեակվորված ժամաբանակ**

Տեսական պարապմունք՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 7 ժամ

### **ԱՐԴՅՈՒՆՔ 3.**

Տիրապետել պարի ուսուցման տարբեր մեթոդների և հնարքների:

### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Գիտի պարերի ուսուցման մեթոդներ և հնարքներ:
2. Մանկական շարժուն խաղերում, պարերում ճիշտ է կիրառում ազգային պարի տարրերը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:
3. Կարողանում է բեմականացնել երգեր, պարեր, երաժշտական հեքիաթներ և պարով կերպարներ ստեղծել՝ օգտագործելով պարը որպես արտահայտչաձև:
4. Կարողանում պարը կիրառել որպես մտածողության արտահայտման միջոցներից մեկը՝ պարային շարժումներով միտք արտահայտել - փոխանցելով:
5. Գիտի ազգային մանկական շարժուն խաղեր և կարողանում է դրանք օգտագործել միջոցառումների ժամանակ:
6. Կարողանում է ներկայացնել կամ բեմադրել կենցաղային աշխատանքային տեսարաններ (խաղող ճգմելը, ճլորթի խաղալը, խնոցի հարելը, սերմ ցանելը...) և դրանք ներառել մանկական պարերի մեջ:

### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի պարի միջոցով ներկայացնել կամ բեմադրել որևէ հեքիաթ կամ կենցաղային աշխատանքային տեսարան, որտեղ կօգտագործվեն մանկական շարժուն խաղեր, ազգային պարի տարրեր՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել որևէ մանկական պարի հիմնական շարժումները:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 մանկական պարի հիմնական շարժումները:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 5 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 4.**

Կարողանա պարի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական երևակայությունը

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Կարողանում է պարել ցանկացած երաժշտության տակ:
2. Կարողանում է մի պարում տարբեր ոճեր միացնել:
3. Կարողանում է պարը որպես լեզու օգտագործել՝ պարով կերպար ստեղծել, մտածողություն արտահայտել, սյուժե բեմականացնել՝ համատեղելով պարն ու մնջախաղը:
4. Պարուսուցումն իրականացնում է նաև որպես մարմնի մտորակաբանական արվեստ:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել տարբեր ոճի պարեր, ստեղծելով տարբեր կերպարներ:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ցանկացած երաժշտության տակ կարողանում է կատարել համապատասխան պարային շարժումներ, համատեղելով դրանք մնջախաղի հնարքների հետ և ստեղծելով տարբեր կերպարներ:

Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է ներկայացնել առնվազն 1 պար:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում՝ համակարգիչ:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**



Տեսական պարապմունք՝ 1 ժամ

Գործնական աշխատանք՝ 5 ժամ

#### **ԱՐԴՅՈՒՆՔ 5.**

Կարողանալ մանկական տարբեր ոճերի պարեր բեմադրել՝ կիրառելով պարը որպես մտածողության, հուզականային որակների արտահայտման միջոց,

#### **ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

Ուսանողը՝

1. Գիտի տարբեր ոճերի պարերի առանձնահատկությունները:
2. Կարողանում է ռիթմիկ և մարզական պարեր բեմադրել:
3. Կարողանում է համադրել տարբեր ոճերի պարային շարժումներ:

#### **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ուսանողին կհանձնարարվի բեմադրել որևէ մանկական պար և ներկայացնել այն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը տարբեր ոճի երաժշտության տակ բեմադրում է մանկական պարեր: Արդյունքի յուրացումը համարվում է կատարված, եթե ուսանողը կարողանում է տարբեր ոճի առնվազն 1 պար:

#### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ձայնարկիչ (մագնիտոֆոն), ձայնասկավառակներ, մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, պարասրահ, անհրաժեշտության դեպքում համակարգիչ:

#### **ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ**

Տեսական պարապմունք՝ 2 ժամ

Գործնական աշխատանք՝ 8 ժամ



Տեսական ուսուցում	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	Նախաավա րտական, արտադրա- կան պրակտիկա	Մոդուլների ամփոփում, քննաշրջան	Ամփոփիչ պետական ատեստա- վորում	Արձակուրդ
----------------------	--	--	---	--------------------------------------	---	-----------

## II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների					
		Քննու- թյուն	Ստու- գարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս			
					Ընդա- մենը	Այդ թվում		3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ		
						Տեսակ. ուսու- ցում	Լաբոր. և գործն. աշխ.	Սեմի- նար պարա պնունք	կիս. 2աբ.	կիս. 2աբ.	կիս. 2աբ.	կիս. 2աբ.	
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ</b>												
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	18	54		36	36			
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		5տ		48	26	22				48		
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		3տ		48	32	16		48				
1.4	Իրավունքի հիմունքներ		5տ		36	18	18				36		
1.5	Պատմություն		3տ		48	28	20		48				
1.6	Ռուսաց լեզու		3,4տ		72	18	54		34	38			
1.7	Օտար լեզու		3,4տ		72	18	54		34	38			
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6		122	24	98		34	36	22	30	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>518</b>	<b>182</b>	<b>336</b>		<b>234</b>	<b>148</b>	<b>106</b>	<b>30</b>	
<b>2.</b>	<b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>												
2.1	Քաղաքական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		18	18			18				

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>18</b>	<b>18</b>			<b>18</b>			
<b>3.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>											
3.1	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		4տ		54	24	30			54		
3.2	Հաղորդակցություն		6տ		36	18	18					36
3.3	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	20	16		36			
3.4	Համակարգչային օպերատորության հիմունքները		5տ		54	10	44				54	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>180</b>	<b>72</b>	<b>108</b>		<b>36</b>	<b>54</b>	<b>54</b>	<b>36</b>
<b>4.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>											
4.1	Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ առողջապահության հիմունքներով	3			108	64	44		10 8			
4.2	Նախադպրոցականի հոգեբանություն		4տ		108	53	55			108		
4.3	Նախադպրոցական մանկավարժություն	4			126	58	68			126		
4.4	Էկոլոգիական դաստիարակության հիմունքներ		3տ		36	18	18		36			
4.5	Բնագիտություն և բնության հետ ծանոթացման մեթոդիկա		5տ	5	72	44	28				72	
4.6	Հատուկ մանկավարժություն		6տ		36	22	14					36
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>486</b>	<b>259</b>	<b>227</b>		<b>14 4</b>	<b>234</b>	<b>72</b>	<b>36</b>
<b>5.</b>	<b>ՀՍՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>											
5.1	Մանկական գրականություն և հայ ժողովրդական բանասիրություն	5	4տ		108	30	78			34	74	
5.2	Խոսքի զարգացում	5	4տ		108	36	72			34	74	
5.3	Գրականություն	6			108	36	72					108
5.4	Թատրոն		6տ		54	11	43					54
5.5	Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդիկա	6		6	90	30	42				16	74
5.6	Կերպարվեստ		6տ		54	20	34					54
5.7	Կերպարվեստի ուսուցման մեթոդիկա		6տ		36	14	22					36
5.8	Ձեռարվեստ		3տ		72	12	60		72			
5.9	Նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա	4			108	46	62			108		
5.1 0	Երգ-երաժշտություն և ուսուցման մեթոդիկա	3			108	35	73		10 8			
5.1 1	Պար-ռիթմիկա		4տ		36	7	29			36		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>882</b>				<b>18 0</b>	<b>312</b>	<b>164</b>	<b>326</b>
<b>6.</b>	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>				72							72
	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>				40							40
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>2196</b>				<b>61 2</b>	<b>648</b>	<b>396</b>	<b>540</b>
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				200							

Շաբաթվա ժամերի քանակը											
-----------------------	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՈՒՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՉՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՉԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ		
1	Վարվելակերպի հիմունքներ				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ		
2	Հայ եկեղեցու պատմություն			1	Անատոմիայի, ֆիզիոլոգիայի և բժշկագիտության		
3	Ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքներ			2	Գրականության և բանահյուսության		
4				3	Մաթեմատիկական կրթության մեթոդիկայի		
				4	Օտար լեզուների		
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5	Գեղարվեստի		
1	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	IV, VI	5, 3	6	Երգ-երաժշտության և պար-ռիթմիկայի		
2	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	V	6	7	Ուսուցման տեխնիկական միջոցների		
3	Նախաավարտական արտադրական պրակտիկա	VI	4	8	Համակարգչային		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		18	9			
					<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>		
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>				1	Մանկավարժության և հոգեբանության		
1. Համալիր քննություն «Նախադպրոցականի մանկավարժություն՝ մասնավոր մեթոդիկաներով» առարկայից (ընդգրկում է «Նախադպրոցական մանկավարժություն», «Բնագիտություն և բնության հետ ծանոթացման մեթոդիկա», «Կերպարվեստի ուսուցման մեթոդիկա», «Երգ-երաժշտություն և ուսուցման մեթոդիկա» մոդուլները) 2. Նախադպրոցականի հոգեբանություն				2	Բնագիտական		
							<b>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐՉԵՍԱՆՈՑՆԵՐ</b>
				1	Տեխնոլոգիայի		
							<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	Մարզադահլիճ		
				2	Մարզահրապարակ		

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:

Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /ամհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակունքներում, սեկցիաներում, խմբակներում:

5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:

6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:

7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:

8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:

9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:

10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:

11. Ուսումնական հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ: